

Կ. Ս. Ակրտումյան և Ն. Ս. Ակրտումյան

ԷԼ. ՓՈՍՏ karinemkrtumyan@rambler.ru

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ



III թողարկում

ԽՄԲԱ ԳԻՐ ԵՎ ՍՐԲԱ ԳՐԻՉ՝
ՆԱՐԻՆԵ ՍԿՐՏՈՒՄՅԱՆ
ՍՈՒՏՔԱ ԳՐՈՂ ԵՎ ՀԱՍԱԿԱՐ ԳՉԱՅԻՆ
ԶԵՎԱՎՈՐՈՂ՝
ԿԱՐԻՆԵ ՍԿՐՏՈՒՄՅԱՆ

Նյութերը հավաքեցին և քարզմանեցին
Կ. Ս. Մկրտումյանը և Ն. Ս. Մկրտումյանը

ԲՆՈՒԹՅԱՆ ԴԵՂԱՏՈՒՆ



ԵՐԵՎԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2010

ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԱՅՍ ԹՈՂԱՐԿԱՄՆ ՄԵԶ ՏԵՂ ԵՆ ԳՏԵԼ

❖ Ինչո՞ւ ենք հիվանդանում քաղցկեղով	5
❖ Մթերքներ, որոնք կանխում են քաղցկեղը	7
❖ Հրաշագործ զարին	12
❖ Հազ	13
❖ Գունարուժություն	16
❖ Անիրաժեշտ տարրեր	17
❖ Թուրք	18
❖ Չրգողություն	22
❖ Երիկամային հիվանդություններ	23
❖ Սիզապարկի հիվանդություններ	28
❖ Լյարդի ու լեղապարկի հիվանդություններ	31
❖ Ծխելը վճասակար է առողջությանը.....	34
❖ Սկնոռ (չիբան)	38
❖ Հմայիչ վարսեր	39
❖ Մազարափություն	41
❖ Թեփ	45
❖ Ուտքերի հիվանդություններ	47
❖ Կոշտուկներ.....	51
❖ Shwad անակնկալներ ֆառունայում.....	53
❖ Լուսնոտություն	56
❖ Ծիճուններ	57
❖ Բրոնխիալ ասթմա	60
❖ Ինքնամերսում	62
❖ Խնձորի բուժիչ հատկությունները.....	63



ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մարդն իր ոչ ճիշտ ապրելակերպի պատճառով, երբեմն էլ իր կամքից անկախ (ժառանգարար) ձեռք է քերում իհվանդություններ: Մայր բնությունը, գրասիրու զտնվելով, դրանց բուժման համար տվել է բազում դարմաններ, որոնց մասին իմանալի ու առողջ ապրելն անհրաժեշտություն է յուրաքանչյուրին համար:

Այս մատենաշարում ընդգրկված են հայկական, ռուսական, չինական, տիբեթական, սերբական, վրացական և շատ այլ բժշկարանների կողմից առաջարկվող լավագույն դեղատոմսերը: Ներկայացված են նաև առօրյա կյանքում առավել հաճախ հանդիպող իրավիճակների, անցանկայի պատահարների ժամանակ կիրառվող մի շաքր միջոցներ, որոնց շնորհիվ կարող եք օգնել ոչ միայն ձեզ, այլև օգնության կարիք զգացող մարդկանց:

Թեև առաջարկվող բուժամիջոցները հասանելի են ամենքին և արդյունավետ, այնուամենայնիվ դրանք օգտագործելուց առաջ ցանկալի է խորիրդակցել բժշկի հետ, քանի որ ամեն մի օրգանիզմ ունի իր առանձնահատկությունները: Կիրառեք տրված դեղատոմսերն ի շահ ձեր առողջության և այս զիտելիքներով օգտակար ենք ամենքին:

ԻՆՉՈ՞Ւ ԵՆՔ ՀԻՎԱՆԴԱՍՈՒՄ ՔԱՂՑԿԵՂՈՎ

Թանի որ բուսակերները համեմատաբար հազվադեպ են հիվանդանում քաղցկեղով, ոմանք չարորակ ուռուցքների առաջացնան պատճառ են համարում մսակերությունը: Գիտնականները հանգել են այն եզրակացության, որ հաստ աղիքի քաղցկեղը հիմնականում առաջանում է յուղոտ կարմիր մսի գործածության հետևանքով: Նրանք կարծում են, որ ճարպերը մարսելու համար լեղից գոյացած թթուն կարող է վնասել աղիքները:

Յարվարդի համալսարանի գիտնականները կատարել են ուսումնասիրություններ և պարզել, որ այն կանայք, որոնց օրվա սնունդը քաղցկացած է կովի, ոչխարի, խոզի մսից, 2,5 անգամ ավելի են ենթակա հաստ աղիքի քաղցկեղի առաջացնան վտանգին, քան նրանք, ովքեր ամսվա մեջ միայն մեկ անգամ են միս ուտում:

Եթեզգուտություններից պարզ է դարձել, որ շաբաթական 2-3 անգամ մաշկած հավի միս ուտողներն ավելի քիչ են ենթակա քաղցկեղով հիվանդանալու վտանգին, քան նրանք, ովքեր ամիսը մեկ անգամ այն ուտում են մաշկով:

Կարծիք կա, որ կարմիր միսը պարունակում է քաղցկեղածին քիմիական նյութեր, այդ իսկ պատճառով էլ հարկավոր է այն հնարավորինս քիչ օգտագործել: «Ինչքան քիչ կարմիր միս սպառվի, այնքան ավելի լավ է», - ասել է պրոֆեսոր Վալտեր Վիլետը՝ Յարվարդի համալսարանի ժողովրդական սննդակարգի և առողջապահության բաժնի դասախոսը: Մի խումբ մասնագետներ էլ գտնում են, որ միսը կենսահյութերով ամենահարուստ ուտելիքն է, հետևապես այն չի կարելի բոլորովին հանել սննդակարգից:

Եթե իրոք քաղցկեղի առաջացման պատճառը մսակերությունն է, ապա բոլոր մսակերներն էլ պետք է որ մահանային հենց այդ չարաբաստիկ հիվանդությունից: Հարցին ըմբռնումով մոտենալով՝ կնկատենք, որ բուսակերներն ու հումակերները սնվում են չմշակված, բնականին մոտ մթերքներով, ուստի ավելի հազվադեպ են հիվանդանում տարատեսակ հիվանդություններով, մասնավորապես՝ քաղցկեղով: Իսկ հրուշակեղենով, պահածոներով, մակարոնով, օվլայով հարուստ սննդով, այսինքն՝ ոչ բնական մթերքներով սնվողներն այնքան էլ չեն տարբերվում մսակերներից:

Ապացուցված է, որ կաթնեղենից պատրաստված ուտելիքները, որոնք հարուստ են կենդանական ճարպով, քաղցկեղ չեն առաջացնում, իսկ կերակրի աղի չարաշահումը նպաստում է քաղցկեղային ուռուցքների գոյացմանը:

Պրոֆեսոր Լոֆմանը եկել է այն եզրահանգման, որ սնունդը մեծ նշանակություն ունի քաղցկեղի առաջացման գործում: Ընդ որում, եականը ոչ թե այն է, թե ինչ են ուտում մարդիկ, այլ այն, թե ինչ չեն ուտում: Մարդու արյան և հյուսվածքների մեջ գոյություն ունեն առողջության համար անհրաժեշտ ամենաքիչը 12 տեսակի հանքային աղեր, այնպես որ արյունը և հյուսվածքներն առողջ վիճակում պահելու համար մարդը պետք է օգտագործի այնպիսի սնունդ, որի մեջ պարունակվում են այդ կենսական նյութերը:

ՄԹԵՐՁՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՆԽՈՒՄ ԵՆ ՔԱՂՑԿԵՂԸ

Հետազոտություններից պարզ է դարձել, որ քաղցկեղի տարբեր տեսակների մեկ երրորդի առաջացումն ուղղակիորեն կախված է սննդամթերքներից, հետևաբար ճիշտ սննդակարգը նվազեցնում է քաղցկեղի առաջացման վտանգը: Քաղցկեղը սովորաբար գոյանում է երկարատև ժամանակահատվածում, իիվանդությունը կարող է երկար ժամանակ թաքնված լինել ու տարբեր գործոնների ազդեցությամբ՝ զարգանալ: Այն մարդիկ, ովքեր բավականաչափ միրգ ու բանջարեղեն են սպառում, 50 %-ով ավելի քիչ են իիվանդանում այս ախտով:

Մասնագետները գտնում են, որ քաղցկեղի վտանգը կասեցնելու համար հարկ է ուտել մրգեր, բանջարեղեն, քանզի դրանցում առկա են հակաօքսիդացնող նյութեր, որոնք կանխարգելում են քաղցկեղի առաջացումը:

Լոլիկի կարմիր գույնը պայմանավորված է մի նյութով, որը կոչվում է լիկոպեն: Լոլիկից զատ, այն առկա է նաև ծներուկի մեջ: Լիկոպենն ունի հակաօքսիդացնող հատկություն: արտադրում է ազատ թթվածին՝ կասեցնելով քաղցկեղով վարակված բջիջների զարգացումը:

Իտալիայում կատարված մի շարք ուսումնասիրություններից պարզ է դարձել, որ մուգ կանաչ գույն ունեցող բանջարեղենների օգտագործումը նվազեցնում է քաղցկեղի որոշ տեսակների տարածումը: Ընդ որում, որքան մուգ կանաչ է բանջարեղենի գույնը, այնքան այն ավելի շատ հակաօքսիդացնող նյութեր է պարունակում:

Սուր համ ու հոտ ունեցող բույսերն ու բանջարեղենները՝ սոխը, սխտողը, ևս խոչընորոտում են քաղցկեղի առաջացմանը: Պեմսիլվանիա նահանգի համալսարանում կատարված ուսումնասիրություններից պարզ է դարձել, որ սխտորի հյութի կիրառությունը 71 անգամ նվազեցնում է կրծքի քաղցկեղի առաջացման վտանգը:

Իսկ այն մարդիկ, ովքեր շատ են օգտագործում սոխ ու սխտոր, ավելի քիչ են հիվանդանում աղջների և ստամոքսի քաղցկեղով: Սխտորը բարձրացնում է օրգանիզմի դիմադրողականությունը՝ հակազդելով հիվանդության վրա: Սխտորի մեջ գոյություն ունեցող ծծմբային բաղադրիչներն օժտված են մարմնի մեջ օտար բջիջները ոչնչացնելու հատկությամբ:

Ցիտրուսային մրգերը՝ կիտրոնը, նարինջը, բուրինջը, նույնպես շատ օգտակար են: Նրանք, ովքեր մեծ քանակությամբ ցիտրուսային մրգեր են օգտագործում, 2-3 անգամ ավելի քիչ են ենթակա քաղցկեղով հիվանդանալու վտանգին, քան նրանք, ովքեր շաբաթը մեկ անգամ են ուտում այդ մրգերը:

Խաչածաղկավորների ընտանիքին պատկանող բանջարեղենները՝ կաղամբը, ծաղկակաղամբը, բրյուսելական կաղամբը, շաղգամը, կանաչ մանանեխը, նվազեցնում են կրծքի քաղցկեղով հիվանդանալու վտանգը: Դրանք պետք է օգտագործել հում կամ թթվաշաշ վիճակում, քանի որ շատ եփելու հետևանքով վերանում են այն քիմիական նյութերը, որոնք օրգանիզմը պաշտպանում են քաղցկեղից: Եթեպատությունները ցույց են տվել, որ հիշյալ բանջարեղեններն սպառողներն ավելի քիչ են ենթարկվում ստամոքսի և հաստ աղիքի քաղցկեղի վտանգին, քան նրանք, ովքեր իրենց սմնդակարգում չեն ներառում դրանք:

Սոյան ունի առնվազն հինգ բաղադրիչ նյութեր, որոնք կասեցնում են այս հիվանդության առաջացումը: Ուսումնասիրություններից պարզվել է, որ սոյան ոչնչացնում է հիվանդ բջջները, արգելակում հաստ աղիքի, նաշկի, քաղցկեղի այլ տեսակների զարգացումը, դանդաղեցնում է խոցի բորբոքումն ու տարածումը: Սիսերի, ոսպի, կարմիր լորու մեջ ևս առկա են հակաքաղցկեղային նյութեր, իսկ հացահատիկի թթվի գործածությունը նվազեցնում է հաստ աղիքի՝ քաղցկեղով հիվանդանալու հավանականությունը:

Քաղցկեղի ուսումնասիրման ինստիտուտներից մեկի մասնագետները հանգել են այն եզրակացության, որ յուղոտ կաթ խմողները կարող են հիվանդանալ կրկողողի, ստամոքսի, հաստ աղիքի, փայծաղի, կրծքի, արգանդի քաղցկեղով: Իսկ ոչ շատ յուղոտ կաթ խմողներն ավելի պաշտպանված են վերը նշված հիվանդություններից:

-9- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Քաղցկեղի դեպքում խորհուրդ է տրվում՝

❖ Հում ավելուկը ծեծել, դնել քաղցկեղի վրա: Հին բժշկաբանները հաստատում են, որ այն օգտակար է:

❖ Կաղամբը պետք է 1-2 րոպեով դնել $40-50^{\circ}$ C ջրի մեջ, ապա այդ ջուրը խմել: Սա հակաքաղցկեղային կանխարգելիչ միջոց է:

❖ Թարմ, բայց մի փոքր թառամած ծիծենախոտը մանր կտրատել, մսաղացով աղալ, թանգիֆով քամել, հավելել այնքան օդի, որքան ծիծենախոտի հյութը է (1:1): Օղու փոխարեն սպիրտ չի կարելի կիրառել: Լցնել փակվող տարայի մեջ, 2 շաբաթ դնել մուռ տեղում և 2-3 օրը մեկ խառնել: Խմել ամեն առավիտ՝ ուտելուց 1 ժամ առաջ: 50 մլ ջրին ավելացնել 1 կաթիլ (2-րդ օրը՝ 2 կաթիլ, 3-րդ օրը՝ 3 կաթիլ) հյութ ու խմել: 10-րդ օրը 10 կաթիլ հյութը խառնել 100 մլ ջրին և խմել: Յասցնել 15 կաթիլի, իսկ եթե 10 կաթիլից հետո հիվանդը վատ զգա, չափաբաժինը չմեծացնել:

❖ Քաղցկեղի դեպքում օգտակար է ճակնդեղի հյութը, որին պետք է ավելացնել մեղր (1:1): Խմել օրը 4-6 անգամ 1-ական սուրճի բաժակ:

❖ Մխտորի գործածությունն արգելակում է քաղցկեղային բջիջների աճը:

❖ Քաղցկեղային բջիջների դեմ պայքարում չափազանց օգտակար է սխտորի օղեթուրմը: Այն ստանալու համար հարկավոր է 200 գ սխտորը մսաղացով աղալ, լցնել ապակյա տարայի մեջ, վրան ավելացնել 200 գ 96 %-անց սպիրտ, բերանն անուր փակել և 10 օր պահել մուռ տեղում: Ապա քամել ու 3 օրից ընդունել օրը երեք անգամ ուտելուց առաջ՝ 1-ական թ/գ բուրմը խառնելով ջրին:

❖ Ըստ Ամիրդովլաթի, բութը բուժում է կոկորդի քաղցկեղը:

❖ Թթի հյութը բուժում է քաղցկեղային հիվանդությունները:

❖ Օրական երկու լոլիկ ուտելը կանխարգելիչ միջոց է քաղցկեղի դեմ:

❖ Գարեջուրը պայքարում է քաղցկեղային բջիջների դեմ:

❖ Օրը 2-3 անգամ՝ ուտելուց 30-40 րոպե առաջ, խմել 1 թ/գ չիչիսամի յուղ: Օգտակար է քաղցկեղի դեպքում:

❖ Օրական 100-500 գ գազարի հյութ խմել: Այն վերացնում է օրգանիզմի քաղցկեղային գոյացությունները:

❖ 3 տարեկան ալոեի տերևները 10 օր պահել սառնարանում, մանր կտրատել, քամել, ավելացնել 3 կարիլ 5 %-ոց յող, մեխակի թուրմ (5 հատիկ մեխակի վրա լցնել 0,5 բաժակ եռացրած ջուր, ծածկել, 6 ժամից քամել): Օգտագործել օրը երկու անգամ 1-ական ծ/գ՝ ուտելուց 15 րոպե առաջ: Մի քանի օրից ցավեր կլինեն, այնուհետև կանհետանան: Օգտակար է ստամոքսի քաղցկեղի ժամանակ:

❖ Արգանդի քաղցկեղի դեպքում 630 գ մայիսյան մեղրը, 635 գ կարմիր գիճին և 350 գ ալոեն (3,5 տարեկան ալոեն 5 օր չի կարելի ջրել, հետո քաղել հաստ տերևները) խառնել ու օգտագործել օրը 3 անգամ 1թ/գ՝ ուտելուց 1 ժամ առաջ: Բուժման կուրսը 2-3 շաբաթ է:

❖ Նավքը քամել՝ անցկացնելով սև հացի, ածուխի շերտով, կիսով չափ ջուր խառնել և ցողման եղանակով բուժել արգանդի քաղցկեղը:

❖ 100-150 գ կաթնաշոռին ավելացնել 2 ծ/գ էկոլոգիապես մաքրուր, չզտված կտավատի ծեթ, լավ խառնել՝ ստանալով համասեռ զանգված: Ընդունել օրը 1 անգամ՝ 3 ամիս շարունակ: Այն կանխարգելում և բուժում է քաղցկեղը:

❖ Համաձայն ռուսական ժողովրդական բժշկության, կեչու սև սումկը՝ չագան, լավացնում է չարորակ հիվանդություններով տառապողների ինքնազգացողությունը: Հարկավոր է թարմ սունկը լվանալ, քերել, իսկ չորացրած սունկը քերելուց առաջ 4 ժամ թողնել եռացրած և սառեցրած ջրում: 1 բաժին քերած չագային ավելացնել 5 բաժին 50°C ջուր, 2 օր թոնել, լավ քամել՝ մզելով նաև սնկի նստվածքը: Ընդունել օրը 3 բաժակ՝ ուտելուց կես ժամ առաջ: Թուրմը սառը տեղում կարելի է պահել ընդամենը 4 օր:

❖ Դանձլամերը կանխարգելում և բուժում է կրծքագեղձի քաղցկեղը, պայքարում է քաղցկեղային բջիջների դեմ, կիրառվում է քաղցկեղային հիվանդությունների բուժման ժամանակ:

Օ ԳՏԱԿԱՐ Է ԻՍԱՆՍԼ

Երիտասարդ մնալու համար հարկավոր է՝

⦿ 24 հատ կիտրոնի հյութը քամել, լցնել ապակյա տարայի մեջ, ավելացնել 400 գ մաքրած սխտոր: Տարայի բերանը թանգիփով ծածկել, իսկ օգտագործելուց առաջ լավ թափահարել: Ընդունել 1 թ/գ՝ նախապես լուծելով 1 բաժակ եռացրած ջրի մեջ: 1-2 շաբաթից քննութությունը կանհետանա, կլավանա ընդիհանուր ինքնազգացողությունը, կրաքարանա աշխատունակությունը: Սխտորն ունի հակակարծրախտային և կազդուրիչ ներգործություն:

⦿ 1 բաժակ եռացրած ջրին խառնել 3/4 թ/գ կիտրոնի հյութ, 1 րոպե եռացնել, ապա լցնել 1-ական ճ/գ շաքարավազ և չորացրած անանուխ: Կրակից վերցնել, 5 րոպե թողնել, քամել ու խմել քննելուց առաջ: Կուրսը 2-3 ամիս է:

⦿ 1-ական թ/գ կիտրոնի հյութը, մեղրը և բուսական յուղը խառնել իրար ու ամեն առավոտ անորի վիճակում խմել: Այն օգնում է պահպանել երիտասարդությունը:

⦿ 1 բաժակ հանքային ջրի մեջ քամել 1/4 կիտրոնի հյութ, խառնել 1 թ/գ մեղր և խմել օրը 1 բաժակ՝ անորի վիճակում:

⦿ 1 բաժակ եռացրած ջրի մեջ լցնել 0,5-ական թ/գ չորացրած և աղացած արոսի ու մասուր, թրմել և խմել: Այն օգտակար է թե՛ երեխաների, թե՛ մեծահասակների համար: Երիտասարդացնելուց զատ, այս ընպելիքը լավացնում է հիշողությունը:

⦿ Օրգանիզմը նաքրելու և երիտասարդությունը պահպանելու համար անհրաժեշտ է մշտապես օգտագործել ծլեցրած ցորեն: Ծլեցնելու համար այն պետք է լցնել ապակյա տարայի մեջ, լվանալ և հավելել այնքան ջուր, որ ցորենից 1-2 մատ բարձր լինի: Տարան կափարիչով ծածկել, 12 ժամ անց քամել ու 12 ժամ թողնել առանց կափարիչով ծածկելու: 1-2 օրից ցորենը կծլի, որից հետո այն հարկավոր է պահել սառնարանում:

ՀՐԱԾԱ ԳՈՐԾ ԳԱՐԻՆ

Գարին հրաշագործ բույս է, որը պարունակում է ածխաջրեր, սպիտակուցներ, ճարպեր: Այն դյուրամարս է, օգտագործվում է սննդի (ձավար, ալյուր, սուրճի փոխարինիչ և այլն), գարեջրի արտադրության մեջ: Իր սննդարարությամբ գերազանցում է ցորենին, սակայն չափից ավելի գործածությունը կարող է հանգեցնել սեռական անկարողության: Հնում գարիով գուշակություններ ու կախարդություններ են արել, եղել է նաև կշռաչափ՝ գարեչափ անվամբ:

Գարին հայտնի է իր բազում բուժիչ հատկություններով: Եթե այն մանրեք, խառնեք քացախի հետ և ստացված շիլան քսեք թաց էկզեմայի վրա, կրուժի այն: Գարու ջրով գլուխը լվանալիս՝ մազերը կուղովեն, կանցնի մոռացկուտությունը, իսկ եթե այրեք, աղաք, աղով շաղախեք ու քսեք ատամներին, դրանք կսպիտակեն ու կամրանան: Զերմերի, ծարավի դեպքում անհրաժեշտ է գարին գիշերը ջրի մեջ թրջել և առավոտյան խնել:

Հին թժկարաններում խորհուրդ է տրվում գարին խոշոր հատիկներով աղալ, ջուր ավելացնել (1:15), եփել այնքան, մինչև մնա մեկ բաժին, աղ անել և ուտել: Մաքրում է ստամոքսը, իշեցնում ջերմությունը, կոտրում է ծարավը, օգտակար է ջրգողության, ներքին մաղղի դեպքում:

Դեռևս մ.թ.ա. 9-4-րդ դդ. Հայաստանում գարուց պատրաստել են կենարար ըմպելիք՝ գարեջուր: Վերջինս պարունակում է վիտամիններ, սպիտակուցներ, ճարպեր, ածխաջրեր, արյունը մաքրում է խոլեստերինից, երիկամները՝ քարերից ու ավագից, սրում է տեսողությունը, պայքարում է քաղցկեղային թժիների դեմ, պահպանում անոթների առաձգականությունը: Գարեջուրը փափկեցնում է կուրծքը, բուժում է հազը, իսկ ոտքերին քսելիս վերացնում է ոսկրացավը:

Գարեհացը թերև ու դյուրամարս մթերք է, չի գիրացնում, ուստի խորհուրդ է տրվում այն մարդկանց, ովքեր գիրանալու հակավածություն ունեն:

ՀԱԶ

- ❖ Սխտորը խորովել, թաթախել մեղրի մեջ և ուտել: Կարելի է նաև այն եփել ու մեղրով ուտել:
- ❖ Խորոված բողկը տաք վիճակում մեղրով ուտել:
- ❖ Առավոտյան և երեկոյան խմել վուշի սերմից պատրաստված թե: Սառը ջուր չօգտագործել:
- ❖ Սերկահիլ կորիզների վրա լցնել եռացրած ջուր, որոշ ժամանակ թողնել, որ լորձը դուրս տա: Մի քիչ տաքացնել ու խմել:
- ❖ Թթվենու տերևներից եփուկ պատրաստել և խմել:
- ❖ Ցորենի հետ խառնած դառը նուշն օգտակար է խրոնիկական հազի դեպքում:
- ❖ Առավոտյան անորի վիճակում խմել 1 ճ/գ քնջութի յուր: Բուժում է խրոնիկական հազը:
- ❖ Կիտրոնը 1-2 րոպեով դնել տաք ջրի մեջ, մսաղացով աղալ, ավելացնել 100 գ փափկեցրած կարագ, 1-2 ճ/գ մեղր: Օգնում է խրոնիկական հազի դեպքում:
- ❖ 200 գ օշինդրը թրմել 0,5 լ օղու մեջ, թողմել 24 ժամ: Ընդունել օրը երեք անգամ 1-ական ճ/գ: Բուժում է ուժեղ հազը, սակայն երեխաներին խորհուրդ չի տրվում:
- ❖ Օրը երեք անգամ խմել 1ճ/գ բազուկի հյութ:
- ❖ Օգտակար է վարունգի հյութը:
- ❖ Պնդուկը ծեծել, խառնել մեղրին և ուտել:
- ❖ Գարեջուրը փափկեցնում է կուրօքը, բուժում է հազը:
- ❖ Չոր հազի դեպքում նուշը խառնել մեղրին և ուտել:
- ❖ 60 գ պղպեղը 250 գ խաղողի սպիտակ գինու հետ եռացնել, քամել ու տաք-տաք խմել օրական երեք անգամ: Ի լրումն այս միջոցի, 1 հատ մեծ գլուխ սոխը մաքրել, լվանալ, քերել, սազի ճարպ ավելացնել: Ստացված խառնուրդը քսել կրծքավանդակի և պարանոցի շրջանում, փաթաթել բրդյա կտորով: Առավոտյան անորի վիճակում ընդունել 1 ճ/գ: Բուժում է չոր հազը:

❖ Կտավատի աղանձի փոխինձը մեղրով շաղախել և ուտել:

❖ 2 բաժին փայտայուղի և 1 բաժին անուշաղրի սպիրտի խառնուրդով մերսել կրծքավանդակը: Այն բուժում է չոր հազը:

❖ Սև բողկը մաքրել, քերել, հյութը քամել, վրան լցնել 1 ճ/գ մեղր: Ընդունել 2 ճ/գ՝ ուտելուց 15-20 րոպե առաջ:

❖ Սև բողկը լվանալ, մաքրել, բարակ շերտերով կտրատել, վրան շաքարավագ ցանել: Գրեթե վեց ժամից հյութը դուրս կտա: Յուրաքանչյուր ժամը մեկ խմել 1 ճ/գ: Ուտական հեքինական այս միջոցն օգտակար է հատկապես երեխաների հազի ժամանակ:

❖ Սև բողկը լվանալ, մաքրել, մանր կտրատել, լցնել էմալապատ կաթսան, շաքարավագ ավելացնել և մոտավորապես 2 ժամ շեռոցում եփել: Պատրաստի խառնուրդը քամել, սառեցնել: Պահել շշի մեջ՝ սառը տեղում, իսկ օգտագործելուց առաջ լցնել տաքացրած գդալի մեջ: Ընդունել օրը 5-6 անգամ 1-ական ճ/գ:

❖ Կեղևով եփված կարտոֆիլը տաք վիճակում տրորել, ավելացնել օղի կամ սպիրտ, դնել հիվանդի կրծքավանդակին և մարմինը փաթաթել ծածկոցով:

❖ Սմբուկը երկարությամբ ճեղքել, մեջը դնել մի շերտ դմակ, խորովել և ուտել:

❖ Վերցնել 1330 գ մեղր, 1 բաժակ մանր կտրատած ալոեի տերևներ, որոնք նախապես պիտի լվանալ ու 10 օր բողնել սառը և մուր տեղում, խառնուրդը շղգեհարել: 150 գ կեչու բողրոշները և 50 գ լորենու ծաղիկները 1-2 րոպե եռացնել 2 բաժակ ջրում: Սառեցնել, քամել, լցնել մեղրի և ալոեի սառած խառնուրդի վրա: Ավելացնել 200 գ ծիրապտոի յուլ, խառնել ու լցնել շշերը: Պահել սառը տեղում, օգտագործելուց առաջ թափահարել: Ընդունել օրը երեք անգամ 1-ական ճ/գ: Ուտական այս միջոցը կիրառում են երկարատև հազի դեպքում:

❖ Զափազանց արժեքավոր դեղամիջոց է այծի կաթը:

❖ Դեղնուցը շաքարավագով հարել և անորի վիճակում ուտել:

❖ Գլուխ սոխի հյութը քամել, մի քիչ շաքարավագով շաղախել: Ընդունել օրը 3-4 անգամ 1-ական ճ/գ:

❖ 2 ճ/գ կարագը, 2 ծվի դեղնուցը, 1 թ/գ այսուրը, 2 թ/գ մեղրը խառնել: Ընդունել օրը 4-5 անգամ 1-ական թ/գ՝ ուտելուց առաջ:

-15- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

❖ Հասած աղամաթուզը մաղով անցկացնել, վրան լցնել շաքարավագ, տաք ջուր (2 աղամաթզին՝ 1 բաժակ ջուր), լավ տաքացնել ու խմել: Սա հազի բուժման բրազիլական միջոց է:

❖ Բողդի հյութին խառնել կաթ կամ մեղրաջուր (1:1): Խմել օրը 6 անգամ 1-ական ճ/գ:

❖ 1 բաժակ տաք կաթը 2 հատ սպիտակ թզի չրի հետ եռացնել: Խմել տաք վիճակում օրը երկու անգամ 1-ական բաժակ՝ ուտելուց հետո: Բուժում է թոքերի բորբոքումից հետո առաջացած հազը:

❖ Մխտորի հյութը խառնել խոզի ճարպին, լավ տրորել, քսել կրծքին, պարանոցին:

❖ Կրծքային հազի դեպքում կրծքավանդակը սրբել մահուրդե կտորով, խոզի փորոտիքի ճարպին կան հալած յուղին եղևնու յուղ ավելացնել, քսել կրծքավանդակին և թողնել չորանա:

❖ Շաղգամի հյութը եռացնել, շաքարով կամ մեղրով խմել:

❖ Գազարի թարմ հյութին ավելացնել կաթ կամ մեղրաջուր (1:1): Խմել օրը 6 անգամ 1-ական ճ/գ:

❖ Կեչու կամ թխու հյութին կաթ խառնել ու խմել:

❖ 1 գլուխ սխտորը և 10 հատ սոխը մանր կտրատել, կաթի մեջ եփել այնքան, մինչև փափկեն: Մի փոքր խառնել արջախոտի (գետնաբաղեղ) հյութ և մեղր: Խմել 1 օրվա ընթացքում 1-ական ճ/գ՝ յուրաքանչյուր ժամը մեկ:

❖ Մատուտակի արմատի 30 գ փոշին, 15 գ սամիթի փոշին, 60 գ շաքարավազն իրար խառնել: Ընդունել օրը երկու անգամ 0,5 թ/գ, իսկ երեխաներին տալ ավելի քիչ:

❖ 1 բաժին գարուն ավելացնել 4 բաժին ջուր, 12 ժամ թողնել, քամել: Խմել օրը երեք անգամ մի քանի կում:

❖ Ուղցը, դահձը կամ անանուխը լցնել էմալապատ կաթսայի մեջ, ավելացնել եռացրած ջուր, գլուխը սրբիչով ծածկել ու 10-20 րոպե շնչել: Խորխաբեր միջոց է և թեթևացնում է հազը:

❖ Խորոված սոխը տաք վիճակում ուտել: Այն փափկեցնում է կուրօքը և կտրում խուխը:

❖ Չոր եղինջն աղալ, մեղրով շաղախել և ուտել: Այն քայքայում ու դուրս է հանում խուխը:

ԳՈՒՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

Դեռևս անտիկ ժամանակներից հայտնի է, որ գույներն օժտված են բուժիչ հատկություններով: Գույների միջոցով բուժումը կոչվում է գունաբուժություն: Յուրաքանչյուր երանգ իր որոշակի ազդեցությունն է ունենում մարդու օրգանիզմի վրա:

Հագուստի գույնի ընտրության ժամանակ հարկավոր է նկատի ունենալ, թե որ գույնն ինչ հատկություններով է օժտված: Եթե մարդը նախընտրում է մուգ երանգներ, ապա նա ենթագիտակցարար ձգտում է ֆիզիկական և նյարդային բուլացմանը, իսկ եթե նրան գրավում են վառ գույները, նշանակում է՝ նա ցանկանում է մեծացնել ստեղծագործական հնարավորությունները: Դարձ է խուսափել միապաղադ գույներից, օրինակ՝ մոխրագույնից:

Կարմիրը մեծացնում է եներգիան, ունի խթանիչ հատկություն: Այն կօգնի ծեզ, եթե սեռական կյանքում ունեք հոգեբանական գործոնների հետ կապված խնդիրներ՝ ֆոփիդություն կամ ինպոտենցիա: Դեղինը նպաստում է մարսողության գործընթացին, դրա շնորհիվ կխուսափեք կոլիտից և ուտելուց հետո՝ փքվելուց: Կանաչը հանգստացնում է, վերացնում է վախը, նպաստում խորը քնին: Պատահական չէ, որ հիվանդանոցներում ու բուժհաստատություններում գերակշռում է այս գույնը: Երկնագույնը ներդաշնակության գույնն է: Այս օգնում է ազատվել մի շարք ցավերից՝ գլխացավից մինչև արյունահոսություն: Երկնագույնին նայելը լավ է անդրադառնում տեսողության վրա: Բաց երկնագույնը կանխում է ճանապարհորդելիս առաջացող սրտխառնութը: Բուժական, առողջարանային հաստատություններում գերիշխում է այս գույնը: Յասամանագույնը հանգստացնում է, նպաստում օրգանների կանոնավոր աշխատանքին: Եթե ցանկանում եք տեսնել նախազգուշացնող երազներ, ննջարանում կիրառեք այս գույնը:

Գունաբուժությունը, անշուշտ, կօգնի վերականգնել ու պահպանել ծեր առողջությունը և կենսունակությունը:

ԱՆՀՐԱԺԵԾՏ ՏԱՐՐԵՐ

Առողջ կեցության համար մարդու օրգանիզմին անհրաժեշտ են ոչ միայն վիտամիններ, այլև՝ մի շարք նյութեր ու տարրեր: Ստորև բարկված են այդ տարրերը և այն մթերքները, որոնց մեջ պարունակվում են դրանք:

Նատրիում (Na)-կերակրի աղ, ձուկ, հաց, պանիր, երշիկ

Կալիում (K)-սուրճ, թեյ, կակաո, սունկ, սպանախ, ոլոռ, ընկույզ, հնդկածավար, մրգեր, բանջարեղեններ

Մագնեզիում (Mg)-ընդեղեն, ծավարեղեն, կակաո, ընկույզ, բալ, հաղարջ, սպանախ, կիտրոն, ամսական բողկ

Կալցիում (Ca)-թեյ, սուրճ, կաթ, ընկույզ, յուղոտ կաթնաշոռ, ոչխարի պանիր

Ծծումբ (S)-նեխուր, ոսպ, լոլիկ, ընկույզ

Ցուֆոր (P)-միս, ձուկ, ձու, պանիր, կաթնամթերք, ընդեղեն, բողկ, վարունգ, կաղամբ, բրյուսելական կաղամբ, ծաղկակաղամբ

Քլոր (Cl)-ծովանմթերքներ, կերակրի աղ

Երկար (Fe)-կակաո, սունկ, սուրճ, ոլոռ, ընկույզ, հաց, հնդկածավար, վարունգ, խնձոր, ազնվամորի, հաղարջ, բալ, սպանախ, կարմիր կաղամբ, միս, անասունի տոտիկներ, գլուխ, բոք, ուղեղ, սիրտ, լյարդ

Պղինձ (Cu) -կալմար, ձողածկան լյարդ, տավարի լյարդ, ոլոռ, կակաո, ընկույզ, հնդկածավար

Ֆառոր (F)-միս, թեյ, ծովանմթերքներ

Ցինկ (Zn)-միս, ձու, ձուկ, լյարդ, ծովանմթերքներ

Մանգան (Mn)-մաղաղանոս, սամիթ, ավելուկ, սև հաղարջ, մորի, հապալաս, ձավարեղեն, ընդեղեն

Քրոմ (Cr)-լյարդ, գարեջրի խմորիչ, սև պղպեղ, երկրորդ տեսակի ալյուրից պատրաստված հաց

Սելեն (Se)-անասունի տոտիկներ, գլուխ, սիրտ, լյարդ, բոք, ուղեղ, ձուկ, ծովային աղ, քարաղ, ծովախեցգետին

Յոդ (I)-կաթնամթերքներ, ծովանմթերքներ, ձկան յուղ, հնդկածավար, սպանախ, սոխ, ճակնդեղ, տանձ

ԹՈՒԹ.Ք

Թութքը տարածված հիվանդություն է, որն առաջանում է փորկապությունից, ոչ ճիշտ սնվելուց, նստակյաց կյանքից, ծանրություն վերցնելուց: Կանանց մոտ այն հիմնականում ի հայտ է գալիս ծննդաբերության հետևանքով: Չբարդացած թութքի ժամանակ հետանցքում լինում է օտար մարմնի զգացում, քոր, կղանքից հետո՝ արյունահոսություն: Բարդացածի դեպքում հետանցքի լորձաթաղանթն այտուցվում է, կարմրում, զգացվում են ցավեր: Եթե կղանքից առաջ գալիս է ժանգագույն արյուն, հարկավոր է անհապաղ դիմել բժշկի:

Թութքի դեպքում խորհուրդ է տրվում՝

✿ Արոսենու հասած պտուղները լվանալ, հյութը քամել: Ընդունել օրը 3 անգամ 1/4 բաժակ: Յյութին մի փոքր շաքարավազ ավելացնել, իսկ ընդունելուց հետո անմիջապես ըմպել 1 բաժակ եռացրած ջուր:

✿ Կաղամախու տերևները դնել թութքի ելունդների վրա: Մինչ այդ ցավող տեղը լվանալ տաք ջրով և օճառով, ապա՝ սառը ջրով: Տերևները 2 ժամ թողնել, իսկ եթե ցավն ուժեղանա, հանել: Սառը ջրով նորից լվանալ: Գործողությունը 1-2 օր կրկնել:

✿ Հում կարտոֆիլից բութ ծայրով մոմիկ պատրաստել, քնելուց առաջ մտցնել հետանցքը, թողնել ամբողջ գիշեր, իսկ առավոտյան հանել:

✿ Սառը ջրում թրջած թանգիֆը մի թերեւ քամել, 1-2 րոպեով դնել թութքի կոների վրա: Օրվա ընթացքում 3-4 անգամ կրկնել: Մի քանի օր անց թրջոցը փոխարինել սառուցով: Վերջինս դնել թանգիֆի մեջ և մոտավորապես կես րոպե պահել ելունդի վրա:

✿ Թութքի վրա, որպես սպելանի, սամիթ դնել:

-19- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

❖ Զրապղպեղի խոտը եռացրած ջրում թրմել, օրը մի քանի անգամ խմել:

❖ Վիրաբուժական ռետինե ձեռնոցի մատը կտրել, մանրած սառույց լցնել, ասեղով կարել, հերմետիկ կապել, քնելուց առաջ դնել հետանցքի մեջ: Կրկնել ամեն գիշեր:

❖ Արքայական գայիսոն բույսի ծաղիկները թրմել ու թեյի նման խմել: 2-3 օրից արյունահոսությունը կդադարի, իսկ մի քանի օր անց հիվանդությունը կբուժվի:

❖ Թութքի բուժման համար ժողովրդական բժշկության մեջ կիրառում են եղինջը, անանուխը, գետնամորին, խատուտիկը, հշառվույտը, ծիծեռնախոտը, կաղնին, կռատուկը, թանթրվենին և այլն:

❖ Ծլեցրած գարին մսաղացով աղալ, ավելացնել տաք ջուր, թողնել 4 ժամ, քամել և մեղրով խմել օրը 4-6 անգամ՝ կեսական բաժակ:

❖ 2 ժամը մեկ ընդունել 1 ճ/զ կիտրոնի հյութ: Օգտակար է խրոնիկական թութքի դեպքում:

❖ 10-15-օրյա խաղողային մոնողիետան (պետք է միայն խաղող ուտել) օգտակար է թութքի դեպքում:

❖ Խորհուրդ է տրվում սխտոր քիչ օգտագործել, քանի որ այն բացասաբար է անդրադառնում թութքի վրա:

❖ Խմել կարտոֆիլի և գազարի թարմ հյութերի խառնուրդ (1:1):

❖ Կաթսայի մեջ լցնել 7 լ ջուր, եռացնել, ավելացնել 400 գ շիբ: Կաթսան ծածկել փայտե կափարիչով, որի կենտրոնում պիտի բացել 5 սմ տրամագծով անցը: Անցքի վրա նստել այնքան ժամանակ, քանի դեռ գոլորշի է դուրս գալիս: Ապա հետանցքին ներսի ու դրսի կողմից վազելին քսել և լուծողական խմել: Որոշ հեքիմներ խորհուրդ են տալիս նախ լուծողականն ընդունել, մաքրելով աղիքները, հետո կատարել վերոհիշյալ գործողությունը: Կրկնել շաբաթը մեկ անգամ: 2-3 տաքացումը բավարար է:

❖ Ներքին թութքի բուժման համար կավե հաստ պուտուկի

մեջ լցել 2 և կաթ, մեջը գցել 4 գլուխս սխտոր, ծածկել, դնել ջեռոցը և մարմանդ կրակով շոգեհարել: Հետանցքը գոլորշու վրա տաքացնել վերը նշված ձևով: 3 օրից գործողությունը կրկնել: 3-4 տաքացումը բավարար է բուժման համար: Նախքան այս ամենը կատարելը՝ 6 ժամ առաջ անհրաժեշտ է լուծողական խմել, իսկ դրանից առաջ և հետո հետանցքին վագելին քսել: Սա խուսական ժողովրդական միջոց է:

✿ Ներքին թութքի դեպքում Կովկասում կիրառում են սառցե մոմիկներ: Քարկավոր է թուղթը գլանաձև փաթաթել, մեջը ջուր լցնել, դնել սառցախցիկը: Օգտագործելուց առաջ թղթե կաղապարը հանել, սառցե մոմիկի ծայրը թրչել տաք ջրի մեջ ու մտցնել հետանցքը: 3-5 օրերի ընթացքում մոմիկը թողնել 30 վկկ, ապա 3-5 օրը մեկ ավելացնել ևս կեսական րոպե՝ կախված այն հանգամանքից, թե հիվանդն իրեն ինչպես կզգա: Խուսափել երկար ժամանակ ոտքի վրա մնալուց, սպիրտային խմիչքներից:

✿ Մեղրով ու սև այսուրով մոմիկ պատրաստել, փաթաթել պերգամենտային (կալեկ) թղթով, սառնարանում սառեցնել, թուղթը հանել և մոմիկն ուղիղ աղիքի մեջ մտցնել: Օգտակար է հիվանդության սրացման դեպքում:

✿ Կղանքից հետո սառը ջրով լվացում անել, այնուհետև պալարների վրա սառը թրջոց դնել: Սկզբնական շրջանում թողնել 1 րոպե, օրական 3-4 անգամ՝ ամեն կղանքից հետո: Շարունակել այնքան, մինչև պալարներն անհետանան: Բուժման կուրսը 3 շաբաթից մինչև 1,5 ամիս է: Այդ ընթացքում պետք է խուսափել սպիրտային խմիչքներ գործածելուց և երկար ժամանակ ոտքի վրա գտնվելուց: Պարկած վիճակում տևական հանգիստը նպաստում է բուժմանը: Սա կովկասյան հայտնի բուժամիջոց է:

✿ Վերցնել ոչ բարձր թիթեյա թիղոն (նեղ բերանով կոնաձև տարա), մեջը դնել շատ տաք աղյուս, որի վրա ցանել մանր կտրատած սխտոր կամ տատասկ՝ ուղտափուշ: Եթե սկսի ծխալ և վառվել, նստել թիղոնի վրա: Սա թութքի բուժման պարսկական միջոց է:

-21- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

✿ Օրը երկու անգամ խմել 2 բաժակ թթու դրած կաղամբի ջուր:

✿ Վերցնել 30 հատ կանաչ ընկույզ, լվանալ, կեղկը մաքրել, կտրատել, լցնել էնալապատ կամ ապակյա տարայի մեջ, ավելացնել 1 լ սպիրոտ: Բերանը ծածկել և մութ տեղում 40 օր պահել: Այնուհետև քամել և ստացված զանգվածին խառնել օշարակ: Դրա պատրաստման համար անհրաժեշտ է 750 գ շաքարավագի վրա լցնել 1 լ ջուր, դնել կրակին, փոքրիկ տոպրակով մեխակն ու դարչինը գցել օշարակի մեջ: Եփել, սարելուց հետո խառնել ընկույզի սպիրտային լուծույթին և խմել:

✿ Թութքի դուրս ընկած կոներն զգուշորեն լվանալ, ամեն կոնի վրա տղորուկ դնել:

✿ Սմբուկի կոթերն ու տերևները չորացնել, մանրել, փոշու վերածել, ցանել թութքի ճեղքերի վրա:

✿ Ամեն երեկո՝ քնելուց առաջ, 5 րոպե նստել ոչ շատ սառը ջորով լի թասի մեջ: Սա նպաստում է ցավերի մեղմացմանը: Կանաց խորհուրդ չի տրվում կիրառել այս միջոցը: Բուժման կուրսը 3 շաբաթ է:

✿ Բորբոքված թութքը լվանալ քնջութի խաշուկով:

✿ Թութքը կրուժվի, եթե խտացված գոլ մեզով հոգնա անեք: Դրա համար պետք է 2 լ մեզն էնալապատ կաթսայում եռացնել այնքան, որ մնա 500 գ:

✿ Քաղցած վիճակում կատարել այս վարժությունը՝ պառկել, ոտքերը և մեջքը բարձրացնել, հենվելով ուսերին ու ծոծրակին, ծեռքերով պահել ուղիղ ձգած մեջքը և պարզած ոտքերն ուղղահայաց իջեցնել հատակին: Վարժությունը կարելի է անել պատի մոտ՝ ոտքերն ու մեջքը հենելով պատին:

ԶՐ ԳՈՎՈՒԹՅՈՒՆ

✿ 800 գ մաղաղանոսը լվանալ, կտրատել, լցնել կաթսայի մեջ, ավելացնել ոչ պաստերիզացված թարմ կաթ և դմել ջեռոցը: Կաթը պետք է տաքանա, բայց չեռա: Ջեռոցում թողնել այնքան, մինչև այն կխոսվ չափ պակասի: Քամել ու ժամը մեկ 1-2 ճ/զ եփուկ տալ հիվանդին: Ողջ զանգվածը խմել 1 օրվա ընթացքում: Սա միզամուղ միջոց է: Երեխաներին հարկավոր է տալ ավելի քիչ: Ժողովրդական բժիշկները պնդում են, որ այս միջոցը շատ արդյունավետ է ջրգողության դեպքում:

✿ Օրական խմել 50 գ մաղաղանոսի հյութ կամ էլ՝ մաղաղանոսի և որևէ այլ հյութի խառնուրդ: Վերջինս ավելի արդյունավետ է:

✿ Հաճախակի ուտել կոտեմով պատրաստված սալաթ:

✿ Չորացրած սև ուտիճները (ցեց) փոշի դարձնել, խառնել մեղրի կամ որևէ այլ համեղ սննդի հետ և ուտել հնարավորինս մեծ քանակությամբ: Ցանկալի է, որ հիվանդը տեղյակ չլինի, թե ինքն ինչ է ուտում:

✿ Շամբուկի արմատն օղիով թրմել: Խմել փոքր չափաբաժնով՝ աստիճանաբար մեծացնելով այն:

✿ Կիտրոնի հյութը նպաստում է ջրգողության բուժմանը:

✿ Որոշ ժամանակ հրաժարվել սննդից և խմել սոխի հյութ: Երեխաներին տալ 30-60 գ, իսկ մեծահասակներին՝ 125-250 գ:

✿ Հասուն լորին կեղևով, հատիկներով և ցողունով չորացնել, դրանով թուրմ պատրաստել ու խմել:

✿ Ջրգողության դեպքում օգտակար է ոլորի եփուկը:

✿ Կծոխուրի կեղևոց պատրաստված ջրաթուրմը բուժում է ջրգողությունը:

✿ Օգտակար են բողկը, նուռը, սխտորը:

✿ Գարին խոշոր աղալ, ավելացնել ջուր (1:15), եփել այնքան, մինչև մնա 1 բաժին: Վրան աղ անել և ուտել:

ԵՐԻԿԱՄԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

✿ 100 գ կեչու տերևները մանրել, ավելացնել 2 բաժակ եռացրած ջուր: 5-6 ժամ թողնել, ապա տերևները ճզմելով քամել: Սառելուց հետո մեկ այլ տարայի մեջ դատարկել այնպես, որ նստվածքը մնա: Խմել օրը 2-3 անգամ 1/2 բաժակ՝ ուտելուց առաջ:

✿ Շատ օգտակար է դդումի սերմերից պատրաստված թեյը:

✿ 1 ծ/գ մաղաղանոսի տերևների և արմատների վրա լցնել 1 բաժակ եռացրած ջուր, թողնել 1 ժամ: Խմել օրը 2 բաժակ:

✿ Սամիթի վերգետնյա մասը մանրել և 1 թ/գ լցնել եռացրած ջոի մեջ: 1 ժամ թրմել, խմել օրը 2-3 անգամ 0,5-ական բաժակ՝ ուտելուց 20 րոպե առաջ:

✿ Կծոյխուրի կեղևի ջրաթուրմը բուժում է երիկամային հիվանդությունները:

✿ Բողդկերը քերել, թանգիֆով հյութը քամել, 1 լ հյութին ավելացնել 400 գ մեղր: Խմել 2-ական ծ/գ՝ ուտելուց առաջ և երեկոյան՝ բնելուց առաջ: Օգտակար է երիկամների համար:

✿ Երիկամների նրսածության դեպքում թթխմոր պատրաստել, տաք վիճակում դնել երիկամների շրջանում: Ծածկել բրդյակտորով, 20 րոպե պահել: Կրկնել այնքան, մինչև ցավն անցնի:

✿ Սուր ցավերի ժամանակ ընդունել տաք լոզանք, պառկել և ցավող տեղին դնել կեղևով խաշած կարտոֆիլ: Այն ճզմել՝ թողնելով այնքան, մինչև ցավն անցնի:

✿ Երիկամի ցավերի դեպքում օգտակար է սալորը:

✿ Երիկամացավի դեպքում եղեսպակի թուրմը գինով խմել:

✿ Թզի չիրը, անանուխն ու ուրցը միասին ուտելով՝ կմաքրեք ձեր երիկամները:

✿ 1 բաժակ եռացրած ու սառեցրած ջոի մեջ լցնել կիտրոնի 1/3 մասը: 10 օր անորի վիճակում խմել օրը երեք անգամ: Դաշորդ 10 օրերին նույն ձևով ընդունել 1/2 կիտրոն: Միաժամանակ

շաբաթը երկու անգամ խմել 60 գ ձիթապտղի յուղ, որին խառնած է 1/2 կիտրոնի հյութ: Այս միջոցը քայքայում է երիկամաքարերը:

✿ Զմերուկի կեղևը (այդ թվում՝ սպիտակ մասը) քերել, թանգիփով քամել, փուլ կտորի վրա, թողնել չորանա: Դրանից թեյ պատրաստել և խմել: Չնդկական այս միջոցը երիկամները մաքրում է քարերից, ավազից:

✿ Օրական խմել 3 բաժակ ոլորի հում հատիկների ջրաբուրմ: Այն մաշեցնում է երիկամային քարերը:

✿ Ամեն առավոտ ու երեկո խմել 1-3 թ/գ կտավատի փոշի՝ այն խառնելով հյութի, ջրի կամ որևէ այլ հեղուկի հետ:

✿ 1 թ/գ վուշի սերմերին ավելացնել 1 բաժակ եռացրած ջուր, թողնել 20 րոպե: Խմել 1 օրվա ընթացքում 2 ժամը մեկ՝ 0,5-ական բաժակ:

✿ Մորոյ մուրաբան մաքրում է երիկամները: Օրը 3 անգամ՝ սնվելուց կես ժամ առաջ, ուտել մորոյ մուրաբա: Սկսել 1 ճ/գ-ից, և ամեն օր չափարաժինը մեծացնել՝ հասցնելով 8 ճ/գ-ի: 9-րդ օրը կրկին ուտել 1-ական ճ/գ ու նորից աստիճանաբար հասցնել 8-ի: Շարունակել այնքան, մինչև 1 կգ մուրաբան սպառվի:

✿ Քաղցր խնձորը մաքրել, կտրատել, եռացրած ջրում թրմել: Խմել ճաշից առաջ կամ հետո: Այն մաքրում է երիկամները:

✿ Մասուրի գործածությունը լուծում է երիկամային քարերը:

✿ Երիկամային քարերի դեպքում օգտակար են տանձի հյութը, թուզը, սեխը, թարխունի թուլնը, վարունգը, բողկը, գարեջուրը, բալի խեժը, դղումը, լոբին, ձներուկը:

✿ Երիկամային քարերի և բորբոքումների ժամանակ օգտակար է եգիպտացրենի նազիկներից պատրաստված թուրմը: 2-3 ճ/գ մանրած մազիկների վրա լցնել 1,5 բաժակ եռացրած ջուր, կափարիչով ծածկել, 30-40 րոպե անց քամել: Խմել օրը 3-4 անգամ 3-ական ճ/գ՝ ուտելուց 10-15 րոպե առաջ:

✿ Խորդենու տերևները ծեռքով կտրատել, վրան լցնել 0,5 լ սառը ջուր, որոշ ժամանակ թողնել և ողջ օրվա ընթացքում կումկում խմել: Մաքրում է երիկամների քարերը:

✿ Երիկամային քարերի և բորբոքումների դեպքում ամեն առավոտ անոթի վիճակում խմել 1 ճ/գ քնջութի յուղ:

✿ Երիկամաքարի դեպքում արգելվում են թեյը, սուրճը, շոկո-

-25- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

լաղը, պահածոները, սպիրտային խմիչքները: Պիտի սահմանափակել մսամթերքի, կերակրի աղի, շաքարի գործածությունը:

✿ Երիկամային հիվանդությամբ տառապողներին խորհուրդ է տրվում ուտել կաղամք թե՛ հում, թե՛ եփված վիճակում:

✿ Բոլոր օրգանների հայրը, համաձայն չինական բժշկության, երիկամներն են: Դրանք ունեն ցինկի պահանջ, իսկ այն պարունակվում է յարդի, ծովամթերքների մեջ:

✿ Սեխի սերմերի ջրաբուրմը բուժում է երիկամները:

✿ Օրը երեք անգամ խմել 1 ծ/զ բազուկի հյութ: Այն մաքրում է երիկամների քարերը:

✿ Ամեն առավոտ անորի վիճակում խմել 30 գ բողկի հյութ: Այն երիկամներից հեռացնում է քարերը:

✿ 4-7 օր ուտել միայն ձմերուկ: Երբ զգաք, որ ավազը շարժվում է, պառկեք տաք ջրում և շարունակեք ուտել: Ձմերուկով մոնողիետան կարող եք շարունակել 20-35 օր: Այդ ընթացքում կազատվեք բոլոր տեսակի քարերից, ավելորդ քաշից ու բազում հիվանդություններից:

✿ 25 գ չորացրած դափնետերկը մանրել, վրան լցնել 0,5 լ օղի, սամիթի սերմ: Թողնել 10 օր: Խմել օրը 7-8 անգամ 3-5 թ/զ: Օգտակար է քարերի դեպքում:

✿ 1 լ-ոց տարայի մեջ լցնել 2-3 ծ/զ կարմիր հաղարջ, 1 ծ/զ շաքարավազ ու եռացրած-սառեցրած ջուր (տարայի կեսից ավելին), դնել տաք տեղ: 1-2 օրից փրփուր կառաջանա: Քամել և խմել օրը երեք անգամ: Այն մաքրում է երիկամների քարերը:

✿ Սոխի հյութը քամել և օրը երեք անգամ խմել 2-ական ծ/զ: Օգտակար է երիկամային քարերի դեպքում:

✿ Բազուկները լվանալ, կտրատել, քիչ ջրով շոգեխաշել: Ստացված թանձը հեղուկը խմել ուտելուց առաջ: Բուժման կուրսը 1 ամիս է: Այն երիկամներից հեռացնում է ավազը:

✿ Թերմոսի մեջ լցնել 1 բաժակ եռացրած կաթ, 3-4 թուզ, թողնել 40 րոպե: Խմել 0,5 բաժակ՝ ուտելուց կես ժամ առաջ: Այն մաքրում է երիկամները:

✿ Ամեն օր խմել 300 գ գազարի, 100-ական գ բազուկի, կիտրոնի և վարունգի հյութերի խառնուրդ: Այն հալում է քարերը:

✿ Երիկամաբորբի դեպքում խմել հում կարտոֆիլի հյութ:

✿ Նեֆրիտի (Երիկամաբորբ) ժամանակ խորհուրդ է տրվում ամեն օր խնել 50 գ մաղաղանոսի հյութ: Ավելի արդյունավետ է մաղաղանոսի և այլ հյութերի խառնուրդը:

✿ Նեֆրիտի դեպքում խնել ծնեբեկի ու գազարի հյութերի խառնուրդ:

✿ 2 թ/գ հազարաթերթիկը 1 բաժակ եռացրած ջրում 1 ժամ թրմել, քամել: Երիկամի բորբոքման դեպքում խնել օրը չորս անգամ 1/4 բաժակ՝ ուտելուց առաջ:

✿ Ոչխարի գլխի արգանակով հոգման տաքացնում ու ամրացնում է Երիկամները:

✿ Դարչինը բացում է խցանումները, մաքրում Երիկամները:

✿ Սիսեռը բացում է Երիկամների խցանումները:

✿ Սմբուկը, սեխը լավացնում են Երիկամների աշխատանքը:

✿ 1 բաժակ վարսակի վրա լցնել 1 լ 80°C ջուր, թողնել 10 ժամ, քամել, ավելացնել 1,5 ճ/գ մեղր, կիտրոնի հյութ: Շատ արդյունավետ միջոց է Երիկամային հիվանդությունների դեպքում:

✿ 1 բաժակ բուսական յուղի մեջ լցնել 2 գլուխ ճզմած սխտոր, 3 օր թողնել սառնարանում: Ընդունել օրը 2-3 անգամ՝ ուտելուց առաջ՝ 0,5 թ/գ խառնուրդին ավելացնելով 0,5 թ/գ կիտրոնի հյութ: Բուժման կուրսը 3 շաբաթ է: 3 շաբաթ դադար տալուց հետո կարող եք կրկնել: Այն մաքրում է Երիկամները:

✿ Երիկամների համար օգտակար է խաղողի դոշաբը:

✿ Հավասար քանակությամբ իրար խառնել կանաչ խնձորի, գազարի, բազուկի հյութերը: Օրական խնել 2-2,5 լ և ոչինչ չուտել: Կիրառել տարին մեկ անգամ՝ 10 օր տևողությամբ:

✿ 2 գլուխ բազուկը կտրատել, վրան ջուր լցնել և լավ եփել: Խնել օրը երեք անգամ 50-ական գ՝ ուտելուց առաջ: Օգնում է Երիկամային ու լեղաքարային հիվանդությունների ժամանակ:

✿ Շաբաթական 1 օր ցիտրուսային դիետա պահել: Ուտել նարինջ, թուրինջ, խմել կիտրոնի հյութ (1 կիտրոնը քամել, 1:3 ջուր խառնել): Օգնում է Երիկամների անկանոն աշխատանքի դեպքում:

✿ Աչքերի տակի այսուցներից ազատվելու, Երիկամների աշխատանքը խթանելու համար 1 ճ/գ չորացրած ու մանրած կանաչ լոբու վրա լցնել 400 մլ ջուր, ծածկել և տաք տեղում 1 ժամ թրմել: Խնել օրը 3-4 անգամ 1/4 բաժակ: Բուժման կուրսը 1 ամիս է:

ՀԵՏԱԶՈՐքԻՐ Է ԻՍԱՆԱԼ

Երազները հաճախ կանխորոշում են իհվանդությունները: Դատկապես կրկնվող երազները ցույց են տալիս ձեր թույլ կողմերը, հետևապես դրանք չի կարելի անուշադրության մատնել: Եթե երազներում սավառնում եք, նշանակում է՝ ձեր թոքերի վիճակն այնքան էլ լավ չէ: Եթե շարունակ զայրանում եք մեկի վրա, հնարավոր է՝ վարակվել եք դեղնախտով: Սրտի գործունեության խանգարման մասին նախազգուշացնում է երազը, որի ժամանակ դուք ընկնում եք բարձունքից: Ձեր սիրտն ուշադրություն է պահանջում նաև այն դեպքում, եթե երազում շարունակ հայտնվում եք լեռան գագաթին կամ ձեզ խեղդում է ծիծառի նոպան: Գրիայից առաջ մարդիկ երազում դժվարությամբ լեռ են բարձրանում: Եթե տեսնում եք, որ ձեր ողնաշարը կոտրվում է, ուրեմն երիկամների վիճակն այնքան էլ լավ չէ: Եթե երազում մշտապես ճանապարհորդում եք, ձեր միզափամփուշտը շուտով «իմաց կտա» իր մասին: Չի բացառվում նաև, որ ձեր երիկամներում քար կամ ավագ կա: Եթե երազում ինչ-որ մեկը կամ ինչ-որ բան ճնշում է ձեզ, դա կարող է հիպերտոնիայի առաջին ախտանիշը լինել: Եթե ողջ մարմինը զրկված է ազատ շարժումներից, ուրեմն կարվածի հավանականություն կա: Անգինայով հիվանդանալուց առաջ սովորաբար տեսնում են կոկորդի հետ կապված երազներ: Ծնչուղիմների հետ առնչվող խնդիրների դեպքում երազում շնչահեղծության զգացում եք ունենում: Իսկ երբ կանաչ սարդեր եք տեսնում, ապա ձեր նյութափոխանակությունը խախտված է: Եթե երազում երգում եք, ուրեմն պետք է դիետա պահպանեք՝ ուտելով բանջարեղեն և երկրորդ տեսակի հաց: Այդ դեպքում ձեր աղիքներն ավելի լավ կաշխատեն: Գաստրիտի հերթական նոպայից առաջ երազում կարող եք հայտնվել փակ տարածության մեջ: Պարբերաբար կրկնվող մղձավանջային երազները վկայում են նյարդային խանգարման մասին: Պետք չէ անտեսել այդ փաստը, քանի որ դա կարող է հանգեցնել հոգեկան խանգարման:

ՍԻԶԱՊԱՐԿԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

✿ Միզապարկի հիվանդությունների ժամանակ օգտակար է մայիսյան կեջու կեղևից պատրաստված թեյը:

✿ Միզապարկի բորբոքման դեպքում խմել հում կարտոֆիլի հյութ:

✿ Եղեսպակի թուրմը գինով եփել ու խմել: Օգտակար է միզապարկի բորբոքումների դեպքում:

✿ Միզապարկի բորբոքման ժամանակ օգտակար է վարսակի թուրմը: 1 լ ջրի մեջ (80°C) լցնել բաժակ վարսակ, թողնել 10 ժամ, քամել, ավելացնել 1,5 ճ/զ մեղր, կիտրոնի հյութ և խմել:

✿ Միզապարկի և միզուլինների բորբոքման դեպքում խմել օղիով պատրաստված ռեհանի թուրմ:

✿ Միզապարկի գրգռվածության ու հաճախամիզության ժամանակ օրը մի քանի անգամ՝ ուտելուց առաջ, խմել կերասի կամ բալի պոչերից պատրաստված թեյ:

✿ Միզապարկի գրգռվածության և հաճախամիզության դեպքում օրը մի քանի անգամ՝ ուտելուց առաջ, խմել եգիպտացորենի մազիկներից պատրաստված թեյ:

✿ Միզակապության ժամանակ խմել եգիպտացորենի մազիկներից պատրաստված թուրմ: 2 ճ/զ մանրացված մազիկների վրա լցնել 1,5 թեյի բաժակ եռացրած ջուր, կափարիչով ծածկել, թողնել 30-40 րոպե, քամել: Խմել օրը 3-4 անգամ 2-3 ճ/զ՝ ուտելուց 10-15 րոպե առաջ:

✿ Դառը նուշը վերացնում է միզակապությունը, հալեցնում միզափամփուշտի քարերը:

✿ Բողկն առանց տերևի ծեծել, 10 դրամ (1դրամը= $2,942$ գ) հյութն անոթի վիճակում խմել: Այն հալում է մեծ ու փոքր քարեր՝ դրանք հանելով միզափամփուշտից:

-29- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

❖ Ավելուկը գինով եփել և խմել: Այն հալում ու վերացնում է միզապարկի քարերը:

❖ Ցավոտ միզածորության, միզածորանի քարերի առկայության դեպքում ուտել սև հաղարջ:

❖ Միզափամփուշտի հիվանդությամբ տառապողներին խորհուրդ է տրվում խմել խաղողից պատրաստված դոչաբ:

❖ Թթուզը միզամուղ է, իսկ տերևներից և պտուղներից ստացված սպիտակ նյութը՝ «կաթը», օգտակար է միզափամփուշտի հիվանդությունների ժամանակ:

❖ Զմերուկը միզամուղ է, շատացնում է մեզը, մաքրում միզափամփուշտի քարերը: Այն հարկավոր է ուտել մեղրով և գինու քացախով:

❖ Միզակապության դեպքում սոխը խորովել ու տաք վիճակում դնել փորին:

❖ Կանաչ լրուց կամ նրա ծաղկներից պատրաստված թուրմն օգտակար է միզապարկի հիվանդությունների դեպքում:

❖ Կտավատի փոշին խառնել որևէ հեղուկի հետ, առավոտյան և երեկոյան խմել 1-3 թ/զ: Բուժում է միզապարկը և միզուղիները:

❖ Կտավատի փոշին խառնել ջրին, ստացված խյուսը փռել թանգիֆի վրա, դնել հիվանդ մասին ու փաթաթել բրդյա կտորով:

❖ Աղամաթուզը բացում է միզուղիները, մեզի կապվածությունը, բուժում է միզելիս առաջացող այրոցը:

❖ Սեխը մաքրում է միզուղիները, առաջացնում է առատ մեզ, բացում է մեզի կապվածությունը:

❖ Միզամուղ հատկություններ ունեն խաղողի հյութը, գինին, դղմիկը, լոբին, սև պղպեղը, սիսեռը, սամիթի արմատների խաշուկը, արմավը, կաթը (բացում է մեզը), գարու ջուրը (1 բաժին գարուն ավելացնել 4 բաժին ջուր, 12 ժամ թողնել, քամել և խմել):

❖ Դարչին ամրացնում է միզապարկը:

❖ Միզապարկի խոցերի դեպքում ուտել վարունգ:

❖ Բողկը մաքրում է միզուղիները:

❖ Միզապարկի հիվանդություն ունեցողներին հակացուցված են արմավը, սիսեռը:

❖ Միզապարկին օգտակար են թուզը, ծորենին, չամիչը, աքաղաղի եփած միսը:

❖ Միզածորանի հիվանդությունների ժամանակ օգտակար է բրինձը:

❖ Ղանձլամերը (մօրօնիկ) շատ օգտակար է միզապարկի ուռուցքի դեպքում:

❖ Ղանձլամերն ունի միզամուղ հատկություն:

❖ Հոնը բացում է կապված մեզը, լավացնում միզարտադրությունը:

❖ Եթե մեզը կապված է, խմել խոզի մսի արգանակ, իսկ եթե կաթիլ-կաթիլ հոսում է, այն կդադարի:

❖ Սամիթի վերգետնյա ճասը ճանրել, 1 թ/գ-ին ավելացնել 500 մլ եռացրած ջուր, թողնել 1 ժամ: Խմել օրը 2-3 անգամ՝ ուտելուց 20 րոպե առաջ: Շատ է օգնում միզածորանի հիվանդության դեպքում:

❖ Ցավոտ միզարտադրության ժամանակ օգտակար է սամիթը:

❖ Անմիզապահության դեպքում այսուսը լավ տաքացնել, դնել մետաղյա դույլի մեջ, վրան սառը ջուր լցնել: Երբ գոլորշի առաջանա, նստել դույլի վրա:

❖ Անմիզապահության ժամանակ եռացրած կաթը լցնել թասի մեջ, նստել վրան:

❖ 0,5 բաժակ կաթին ավելացնել 1 թ/գ մեղր, խառնել և խմել: Օգտակար է անմիզապահության ժամանակ:

❖ Անկողնում միզողին տալ խոզի խորոված միզապարկ:

❖ Ցավասար քանակությամբ արևքուրիկը և տերեփուկը թրմել ու թեյի նման խմել: Ոտս հեքիմները հավաստիացնում են, որ սա անմիզապահության դեմ ամենահուսալի միջոցն է:

ԼՅԱՐԴԻ ԵՎ ԼԵՂԱՊԱՐԿԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

❖ Բողկը քերել, հյութը քամել, 1 լ հյութին ավելացնել 400 գ հեղուկ մեղր: Խմել 2-ական ճ/զ ուտելուց առաջ և երեկոյան՝ քննելուց առաջ: Օգտակար է յարդի համար:

❖ Լյարդի հիվանդությունների դեպքում ամեն օր խմել 20-30 գ քննութիւնուղիւն:

❖ Մաղաղանոսի սերմն օգտակար է յարդին: Այն մանրել, փոշի դարձնել և օգտագործել օրական 12 գ:

❖ Լյարդի հիվանդությամբ տառապողները պետք է ամեն օր ուտեն 100 գ կարնաշոռ: Սա տիբեթական միջոց է:

❖ Օրական 0,5 դրամ (1 դրամը=2,942 գ) անմոռուկ խմելն օգտակար է յարդին:

❖ Որոշ հեթիններ խորհուրդ են տալիս յարդի հիվանդությունների դեպքում խմել թուու դրած կաղամբի ջրի և լոլիկի հյութի խառնուրդ (1:1):

❖ Լյարդի համար օգտակար են ելակը, դդումը, դդմիկը, թութը, դեղձը (հատկապես՝ չիրը), դանդութը, խաղողը, ծորենին, սիսեռը, սալորաչիրը, ավելուկը, ռեհանը (վերջինս բացում է յարդի խցանումը):

❖ Լյարդի հիվանդություն ունեցողներին արգելվում է ուտել սպիտակ հաց, խմել սուրճ:

❖ Քացախով եփված սմբուկը բացում է յարդի խցանումը, իսկ սմբուկի հաճախակի գործածությունը կանխում է յարդի ցիրոզը:

❖ Ոլորի եփուկը բացում է յարդի խցանումը:

❖ Եզիպտացորենի մազիկներից պատրաստված թուրմն օգտակար է յարդի հիվանդությունների ժամանակ:

❖ Սամիթի թուրմն օգտակար է յարդի հիվանդությունների ժամանակ: Բույսի վերգետնյա մասը մանրել, 1 թ/զ-ին ավելաց-

մել 500 մլ եռացրած ջուր, թողնել 1 ժամ: Խմել օրը 2-3 անգամ 0,5-ական բաժակ՝ ուտելուց 20 րոպե առաջ:

✿ Լյարդի հիվանդությունների դեպքում օգտակար է վարսակի թուրմը: 1 բաժակ վարսակի վրա լցնել 1 լ ջուր (80°C), թողնել 10 ժամ, թամել, խառնել 1,5 ճ/զ մեղր, կիտրոնի հյութ ու խմել:

✿ Լյարդի հիվանդությամբ տառապողներին խորհուրդ է տրվում դդումը մեղրով ուտել կամ խմել դդումի թարմ հյութ:

✿ Լյարդի ցավերը կանցնեն, եթե ամեն օր ուտեք 350 գ հունական ընկույզ, 200 գ չամիչ և պանիր: Սա տիբեթական բուժամիջոց է:

✿ Տիբեթի բժիշկներն առաջարկում են խմել սև հաղարջի մատողաշ ճյուղերից պատրաստված թեյ: Այն բուժում է յարդի ցավերը:

✿ 1 ճ/զ կտավատի սերմը լցնել 1 բաժակ եռացրած ջրի մեջ, երեկոյան դմել մարմանդ կրակին: Առավոտյան անոթի վիճակում խմել 0,5 բաժակ, իսկ մյուս կեսը խմել երեկոյան: Օգտակար է յարդի ցավերի ժամանակ:

✿ Կեղևով խաշած կարտոֆիլը կիսել ու տաք վիճակում դմել յարդի վրա: Այն բուժում է յարդի ցավերը:

✿ Սմբուկը, սեխը, եգիպտացորենը կարգավորում են յարդի աշխատանքը, իսկ ոսպը և աղամաթուզն առաջացնում են յարդի խցանում:

✿ Ամեն առավոտ անոթի վիճակում սալորի հյութ խմելը նպաստում է յարդի մաքրմանը:

✿ Սերկնիլը, լավ հասած թուզը մաքրում են յարդը:

✿ Պնդուկ ուտելը նպաստում է յարդի քարերի լուծմանը:

✿ Եթե յարդում քարեր կան, ըստ տիբեթական բժշկության հարկավոր է օրը 6 անգամ մորի ուտել: Կամ էլ ամեն առավոտ խմել 5 ճ/զ ազնվամորու հյութ:

✿ Խմել կծոխուրի կեղևի ջրաթուրմ: Այն բուժում է յարդը, օգտակար է լեղաքարային հիվանդությունների դեպքում:

✿ Բողկի հյութը շատ օգտակար է լեղաքարային հիվանդությունների ժամանակ: Այն կանխարգելում է յարդում քարերի ա-

-33- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

ռաջացումը: Պետք է խմել օրը երեք անգամ 30 գ՝ ուտելուց 20 րոպե առաջ: Մեկ կուրսի համար անհրաժեշտ է 10 կգ բողիկ: Այս միջոցը կարելի է կիրառել տարեկան միայն մեկ անգամ:

❖ Թարխունի թուրմն օգտակար է խրոնիկական խոլեցիստիտի դեպքում:

❖ Լյարդի բորբոքման ժամանակ օգտակար է թանը:

❖ Ղանձլամերը բուժում է լյարդի հիվանդությունները:

❖ Լեղու կանգի, լեղապարկի քարերի և ավազի դեպքում 1/4 բաժակ ծիթապտղի յուղն ու նույնքան բուրինջի հյութը խառնել: Մաքրող հոգնա ամել: Խմել քնելուց առաջ՝ ընթրիքից 1 ժամ հետո: Ընդունելուց հետո պառկել աջ կողքի վրա՝ դնելով տաք ջեռակ: Արավոտյան կրկին հոգնա ամել:

❖ Լեղապարկում քարեր ունեցողներին ռուս հեքիմներն առաջարկում են խմել 1 բաժակ ծիթապտղի յուղ և նույնքան էլ կիտրոնի հյութ: Ուտելուց 6 ժամ հետո խմել 4 ճ/զ ծիթապտղի յուղ, վրայից՝ 1 ճ/զ կիտրոնի հյութ: Գործողությունը կրկնել 15 րոպեն մեկ: Երբ ծիթապտղի յուղը վերջանա, միանգամից ընպել մնացած կիտրոնի հյութը:

❖ Լեղաքարային հիվանդությունների ժամանակ ամեն օր՝ ուտելուց 30 րոպե առաջ, խմել 0,5 բաժակ թթու դրած կաղամբի ջուր:

❖ Կծոխուրի տերևների սպիրուտային լուծույթն օգտակար է լեղածորանի հիվանդությունների դեպքում: Խմել օրը 2-3 անգամ 26 կարիլ: Բուժման կուրսը 2-3 շաբաթ է:

❖ 1 թ/զ կծոխուրի արմատի կեղկը լցնել 2 բաժակ եռարած ջրի մեջ, 4 ժամից քամել: Օրվա ընթացքում կումերով խմել: Օգտակար է լեղածորանի հիվանդությունների ժամանակ:

❖ 1 կգ կարտոֆիլը լավ լվանալ, առանց կեղևելու 3 լ ջուրունի այնքան, մինչև ջուրը կիսով չափ պակասի: Գիշերը թողնել, խմել 100 գ՝ ուտելուց առաջ: Մաքրում է լեղապարկի քարերը:

❖ Եթե լեղուղիներում քարեր կան, ուտելուց կես ժամ առաջ խմել ծիթապտղի յուղ՝ սկզբում թեյի գդալով, ապա աստիճանաբար հասցնել 1/2 բաժակի:

ԾԽԵԼԸ ՎՆԱՍԱԿԱՐ Է ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ



Ծխախոտի ծուխը թունավորում է ողջ օրգանիզմը, նպաստում տարատեսակ հիվանդությունների զարգացմանը: Այն բաղկացած է 4.000 և ավելի քիմիական տարրերից, որոնցից 43-ն արդեն հայտնի են որպես քաղցկեղածին նյութեր: Գիտնականներն ապացուցել են, որ ծխախոտի ծուխն ուղղակի կերպով չժխողին ավելի շատ է վնասում, քան` ծխողին:

Հայտնի է, որ ծխախոտի գործածությունը կանանց վրա ավելի բացասաբար է անդրադառնում, քան` տղանարդկանց: Ծխելու հետևանքով մարդու օրգանիզմը կորցնում է մեծ քանակությամբ վիտամին C, որն ազդում է դիմադրողականության և արտաքին տեսքի վրա: Ծխելը չափազանց վատ է անդրադառնում կնոջ գրավչության վրա. մաշկը դառնում է դեղնավուն, հողագույն, կնճռոտվում է, բորշոմում, ատամները դեղնում են, կարող են առաջանալ լնդերի զանազան հիվանդություններ: Մազերը կորցնում են բնական ֆայլը, դառնում են ոյլուրաբեկ, վատորակ: Ծխախոտի ծուխը գրգռում է աչքերը, կոպերը բորբռքվում են, ծիածանաթաղանթ՝ պղտորվում, աչքերի շուրջն առաջանում են կնճիռներ: Զայնը կոպտանում է, դառնում կերկերուն, տիհած:

Այն աղջիկները, ովքեր սկսում են ծխել մինչև սեռական հասունացման շրջանը, ֆիզիկապես վատ են զարգանում, հիվանդանում են բրոնխիտով: Նիկոտինը գրգռում է էնդոկրին համակարգը, այդ իսկ պատճառով էլ մոլի ծխող կանայք անսականի ժամանակ ավելի ցավազգաց են լինում: Ծխելու հետևանքով հաճախ ժամանակից շուտ դաշտանադադար է սկսվում: Ծխելը շատ վատ

-35- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

է ազդում վերարտադրողական համակարգի վրա: Ծխող կանայք հղիության ընթացքում կարող են արյունահոսություն ունենալ, անակնկալ վիճել: Ծովսը բացասաբար է անդրադաշնում նաև հորմոնային համակարգի վրա: Համաձայն համաշխարհային վիճակագրության, վահանածն գեղձի հիպերտրոֆիայով հիվանդանում է ծխող կանանց 30 %-ը, իսկ չծխողների՝ 5 %-ը: Վահանածն գեղձն զգայուն է նիկոտինի նկատմամբ: Վերջինս ուժեղացնում է նրա գործունեությունը:

Ծխախոտից շատ խիստ տուժում է նաև նյարդային համակարգը: Նիկոտինն սկզբում լայնացնում է ուղեղի անոթները, սակայն դրանք շուտով սկսում են նեղանալ, իսկ մոլի ծխողների մոտ՝ կարծրանալ: Դա ուղեղային հյուսվածքներում առաջացնում է թթվածնային քաղցի:

Բժիշկները հավաստիացնում են, որ կանայք ավելի շատ մահանում են թքերի, քան` կրծքի քաղցկեղից: Ծխելու հետևանքով առաջանում է ոչ միայն թքերի քաղցկեղ, այլև՝ բազում այլ հիվանդություններ (բրոնխիտ, բրոնխիալ ասթմա և այլն): Օրական մեկ ծխախոտ ծխելը կանանց մոտ 2-3 անգամ ավելացնում է սրտի և ուղեղի կաթվածի, կոկորդի, երիկամների, միզափամփուշտի քաղցկեղի հավանականությունը: Ծխելու պատճառով կարող է զարգանալ կատարակտ, ոսկորների փխրունություն:

Տղամարդիկ ծխելը թողնելուց հետո երեք ամիսների ընթացքում գիրանում են, այնուհետև նրանց քաշը կանոնավորվում է: Կանայք ծխելը թողնելուց հետո մեկ տարվա ընթացքում գիրանում են 3-4 կիլոգրամով:

Եթե հետևեք ստորև բերվող խորհուրդներին, ապա աստիճանաբար իրաժեշտ կտաք այդ վատ սովորությանը՝

✿ 1 ճ/զ թարմ եզան լեզուն լցրեք կավե ամանի մեջ, ավելացրեք 1 բաժակ եռացրած ջուր, 2 ժամ թրմեք: Խմեք օրը երեք անգամ 1-ական ճ/զ: Երեք շաբաթ ընդունեք այս դեղամիջոցը, ապա, որոշ ժամանակ դադար տալուց հետո, կուրսը վերսկսեք:

✿ Խուսափեք ծխողների շրջապատից:

❖ Յնարավորինս հետաձգեք ծխախոտ ծխելու ձեր որոշած ժամանակը:

❖ Զբաղվեք մարմնամարզությամբ. դրանով դուք կարող եք ձեր ուշադրությունը շեղել ծխելուց:

❖ Հրաժարվեք ձեզ հյուրասիրած սիզարետից:

❖ Երբ ծխելու ցանկություն եք ունենում, կերեք արևածաղիկ, կոնֆետ, միրգ կամ բանջարեղեն, մաստակ ծամեք (իհարկե՛ ոչ հասարակության մեջ), հրաժարվեք սուրճից ու ոգելից խմիչքներից:

❖ Սիզարետները պահեք աչքից հեռու, որպեսզի ձեռքը մեկնելիս դրանց չհասնեք:

❖ Ծխեք այնպիսի սիզարետ, որը ձեզ այնքան էլ դուր չի գալիս:

❖ Սուրճի հետ մի' ծխեք:

❖ Հրաժեշտ տվեք ճաշից հետո ծխելու սովորույթին:

❖ Անկողնում երբեք մի' ծխեք:

❖ Հրաժարվեք հեռուստացույցի առջև ծխելու սովորույթից:

❖ Յուրաքանչյուր ծխած սիզարետից հետո մախրանանը լվացեք:

❖ Սիզարետի միայն կեսը ծխեք:

❖ Մի' ծխեք, երբ սրճարանում սպասում եք պատվերին:

❖ Ղեկի մոտ մի' ծխեք:

❖ Եթե ուզում եք ծխել, համբերեք ևս 10 րոպե:

❖ Մի' ծխեք փողոցում, կանգառում:

❖ Մոխրամանը դատարկելով՝ այն հեռացրեք տեսադաշտից:

❖ Առաջին ներքաշելուց հետո սիզարետը հանգրեք, ապա կրկին վառեք այն:

❖ Խուսափեք ծխել ծանոթների կամ գործընկերների հետ խոսելիս:

❖ Աշխատեք ծխել առանց ներս քաշելու:

❖ Աշխատավայրում ծխելը հասցրեք նվազագույնի:

❖ Աշխատեք օրվա երկրորդ կեսին ընդհանրապես չծխել:

Օ ԳՏԱԿԱՐ Է ԻՍԱՆՆԱԼ



Եթե ձեզ ոչ մի կերպ չի հաջողվում թողնել ծխելը, ազատվել այդ արատավոր և կործանարար սովորութից, ապա գոնե սովորեք ծխել այնպես, որ ինարավորինս խնայեք ձեր առողջությունը և կանխեք բազմաթիվ իիվանդությունների առաջացման ու զարգացման պատճառ հանդիսացող վտանգը:

ԾԽԵԼՈՒ ԻՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԻԱՄԱՐ ԽՈՐՀՈՒՐԴ Է ՄՐՎՈՒՄ՝

- ⦿ Օգտագործեք այնպիսի ծխախոտ, որի մեջ նիկոտինի պարունակությունը քիչ է:
- ⦿ Երբեք մի' ծխեք քաղցած վիճակում՝ ձեզ խաբելով մի քանի կում թեյով կամ սուրճով:
- ⦿ Քաղցը մի' բթացրեք ծխախոտով:
- ⦿ Փորձեք իրաժարվել քնելուց առաջ ծխելու սովորությունից:
- ⦿ Ծխախոտը մինչև վերջ մի' ծխեք. նիկոտինի, կարանյութերի և այլ վնասակար միացությունների նստվածքը հավաքվում է ֆիլտրի մոտ:
- ⦿ Մի' ծխեք նյարդայնացած և արագ-արագ. նման կերպ ծխվող ծխախոտի ծուխն ավելի շատ ածխածնի օքսիդ է պարունակում, քան` դանդաղ ծխվողը:
- ⦿ Մի' ծխեք որևէ հեղուկ ընդունելով, որովհետև վնասակար բաղադրիչները ջրում հեշտությամբ են լուծվում և առանց դժվարության հասնում կերակրափող, որտեղ յուրացվում են 100 %-ով:
- ⦿ Մի' ծխեք փակ, դժվար օդափոխվող տարածքներում, քանի որ ինքններդ ձեզ կարող եք թունավորել որքան ուզում եք, սակայն ուրիշներին պարտավոր եք խնայել:

ՄԿՆՈՌ (ՉԻՔԱՆ)

❖ Միջին չափի գլուխս սոխսը խորովել, կիսել ու տաք վիճակում դնել չիբանի վրա: Ծածկել բամբակի շերտով, թինտով կամ որևէ այլ միջոցով, որպեսզի սոխը երկար ժամանակ տաք մնա: 4 ժամը մեկ վիրակապը փոխել:

❖ Չիբանի վրա դնել կանաչ սոխի շիլա և վիրակապել:

❖ Մեղրը և աշորայի այսուրը լավ խառնել, ստացված զանգվածը դնել չիբանի վրա, թղթով ծածկել ու կապել:

❖ Աշորայի հացի վրա աղ անել, լավ ծամել, դնել մկնոռին:

❖ Կաղամբի թերթիկը դնել չիբանի վրա, թինտով կապել և թողնել մի քանի ժամ: Գործողությունը կրկնել մի քանի անգամ, մինչև չիբանը ծակվի:

❖ 1 ճ/գ երիցուկը 0,5 լ ջրում 20 րոպե եռացնել, թարախապալարը պահել գոլորշու վրա կամ էլ երիցուկի եփուկից թրջոց դնել: Վերջում մաշկը շփել սպիրոտով կամ օղիով:

❖ Բոված քնջութը փոշի դարձնել, յուղով տրորել ու թարախապալարների դեպքում այն կիրառել որպես սպեղանի:

❖ Կտավատը փոշի դարձնել: 1-3 թ/գ փոշին խառնել կաթին, ջրին կամ հյութին, խմել առավոտյան և երեկոյան: Կարելի է նաև այդ փոշուն ջուր ավելացնել, շիլա պատրաստել, քսել թանգիֆի վրա, դնել թարախապալարին ու փաթաթել բրոյա կսորով:

❖ Պանիրը գեյրունի ծեթով տրորել, դնել չիբանի վրա:

❖ Եզան լեզվի թարմ տերևները լվանալ, ծալել, դնել չիբանի վրա, մի քանի ժամ թողնել, ապա փոխարինել նոր տերևով: Այս գործողությունը կրկնել այնքան, մինչև չիբանը ծակվի:

❖ Չի կարելի թարախը չիբանից սեղմելով դուրս հանել, քանի որ դա կարող է առաջացնել սեպսի՝ ընդհանուր վարակում:

❖ Սկնոռը պետք է հասունանա և պատռվի ինքնաբերաբար, բնական ընթացքով: Արգելվում է չիբանի սեղմումը հատկապես այն դեպքում, եթե այն հասունացած չէ:

ՀՄԱՅԻՉ ՎԱՐՍԵՐ



Ի՞նչ ամել գրավիչ տեսք ունենալու համար. չէ՞ որ կնօշ լավագույն զարդը բոլոր ժամանակներում համարվել են փայլուն և խիտ մազերը: «Պարզապես լվացեք գլուխը», - խորհուրդ է տալիս ֆրանսիական ասացվածքը: Մեր օրերում, եթե շամպուների տեսականին բավականին մեծ է, մազերը կարելի է լվանալ ամեն օր, հատկապես եթե դրանք ճարպուտ են: Սակայն միայն լվանալը քիչ է մազերի խնամքի համար: Ճնարավորինս պիտի խուսափել վարսահարդարիչից և շաբաթը մեկ անգամ կիրառել սնուցող քսուք: Յարկավոր է 2 ձվի դեղնուցը և 1 ձվի սպիտակուցը լավ հարել, ավելացնելով կես թեյի բաժակ տաք ջուր, ստացված խառնուրդը տրորելով քսել գլուխ մաշկին, ապա գլուխը լավ ցայել: Մազարմատներն ամրացնելու նպատակով քսել ևս 1 ձվի դեղնուց, խավավոր սրբիչով գլուխը փաթաթել, 10 րոպե անց լվանալ:

ճարպուտ մազերը 2 ամսվա ընթացքում պետք է լվանալ երեք օրը մեկ՝ միայն կաղնու կեղևի եփուկով: Դրա համար 3 ճ/զ կաղնու կեղևը 15 րոպե եփել 1 լ ջրում, քամել: ճարպուտ մազերը լվանալուց հետո ցայել եփուկով, որն ստանալու համար 1-ական ճ/զ տատրակի, եղինջի, եզան լեզվի, արևքուրիկի վրա պվելացնել 0,5 լ եռացրած ջուր, 30 րոպե թրմել, քամել: Կամ էլ 2-ական ճ/զ դաշտային ծիածետի, կաղնու արմատների և անանուխի վրա 1 լ եռացրած ջուր լցնել, թրմել, դրանով ցայել գլուխը: Օգտակար է նաև խնկեղեգի, երիցուկի, եղինջի (միևնույն քանակությամբ) կամ կոատուկի կոճղարմատներից պատրաստված եփուկը:

Եթե մազերը չոր են, փշրվող, հարկ է խուսափել քիմիական

գանգրացումից, իսկ լվանալուց հետո քսել գերչակի, նշի, դեղձի կամ շաղգամի յուղ: Առաջգականություն և փայլ ձեռք բերելու համար չոր մազերը սնուցման կարիք ունեն: Լվանալուց 1 ժամ առաջ մազարմատներին քսել գերչակի յուղ, գլուխը ծածկել մազաղաթե թղթով, վրան դնել տաք ջրում թրջած ու լավ քանված խավավոր սրբիչ, գլուխը կապել գլխաշղով: Բարերար աղբցություն է ունենում նաև շաղգամով պատրաստված քսուքը: 100 գ մանր կտրատած թարմ շաղգամը 24 ժամ թողնել ծիրապտղի յուղի մեջ, այնուհետև մարմանդ կրակի վրա 15 րոպե եփել, սառելուց հետո քսել գլխին, ծածկել վերոհիշյալ ձևով, 2 ժամից լվանալ: Բաց գույնի չոր մազերը կարելի է ցայել փիփերթի ու երիցուկի եփուկով: Սազերը կփափկեն, եթե ցայեք ջրով, որի մեջ լուծված է կիտրոն կամ քացախ:

Հայտնի է, որ դեղաբույսերը ոչ միայն բուժում են, այլև՝ թարմացնում վարսերի գույնը: Շիկահերներին առաջարկվում է 1-ական ճ/գ երիցուկը և հազրեվարդը 1/3 բաժակ օդու մեջ 2 շաբաթ մութ տեղում թրմել, քամել, շաբաթը 2 անգամ՝ քնելուց առաջ, քսել ողջ մազերի երկայնքով: Կամ էլ 2 ճ/գ երիցուկը 1 լ ջրում 5 րոպե եռացնել, քամել, հովացնել, քսել մազարմատներին:

Սուզ գույնի մազեր ունեցողները գլուխը լվանալուց հետո կարող են այն ցայել ալոեի կամ թեյի թուրմով կամ էլ՝ գայլուկի եփուկով:

Մազերի հիգիենայի համար մեծ նշանակություն ունի նաև սանրելը: Հարկավոր է ընտրել նոսր և ոչ սուր ատամներով սանր: Օրական 4-5 րոպե սանրելը շատ օգտակար է, որովհետև գլխի ճարապը բաշխվում է հավասարաչափ՝ արմատներից մինչև մազերի ծայրը, որի շնորհիվ էլ վարսերը դառնում են առաջգական, փայլուն, չփշրկող: Խոզանակով սանրելիս կատարվում է գլխամաշկի մերսում, լավանում է արյան շրջանառությունը, սնուցվում են մազերը, հանգստանում նյարդերը:

ՄԱԶԱԹԱՓՈՒԹՅՈՒՆ

✿ Գայլուկի կոները հավաքել օգոստոս-սեպտեմբեր ամիսներին՝ նախքան լրիվ հասունանալը: Մազարմատներն ամրացնելու համար 1 ճ/գ գայլուկի վրա լցնել 1 բաժակ եռացրած ջուր, 30 րոպե եռացնել, սառելուց հետո քսել գլխի մաշկին:

✿ Գլուխը գոլ ջրով թրջել, կերակրի աղը թեթևակի մերսելով 10-15 րոպե քսել գլխին ու մազերը լվանալ: Կրկնել 6 անգամ: Այս միջոցը շատերին է փրկել ճաղատանալուց:

✿ Կես սոխը մանր կտրատել, 2-3 պետք սխստորը ճզմել, լցնել թանգիֆի մեջ, սոխի և սխստորի հյութը քամել, ավելացնել 2-3 ճ/գ բուսական յուղ, քսել մազարմատներին, 20 րոպեից լվանալ:

✿ Խսաղողի ճյուղի հյութը քամել, խառնել ձիթապտղի յուղին, քսել մազարմատներին: Այն նպաստում է մազերի աճին:

✿ 6 բաժին երիժնակի արմատների եփուկի վրա լցնել 4 բաժին սոխի հյութ, 1 բաժին կրնյակ: Քսել գլխին, գլուխը սրբիչով փաթաթել, 2 ժամ անց լվանալ: Ամեն օր կրկնել:

✿ Որպեսզի մազարմատներն ամրանան և գլխի մաշկն առողջանա, 250 գ տակարի ուսկրածուծը եփել քիչ քանակությամբ ջրով, քամել, ավելացնել 1 թ/գ մաքուր սպիրտ: Երիժնակի յուղով գլուխը մերսել, հետո մազերը լվանալ ճյութօճառով: Սի փոքր էլ մերսել ու պատրաստված զանգվածը քսել գլխին: Սրբիչը տաք ջրում թրջել, քամել և դրանով կապել գլուխը: Կրկնել 5 անգամ, որպեսզի սրբիչը միշտ տաք լինի: Գիշերը գլուխը կապել տաք գլխաշորով: Առավտույան գլուխը կրկին մերսել և 1 ժամից լվանալ:

✿ Վերցնել 3-ական ճ/գ կռատուկի մանրած արմատներ, խնկեղեգի ընդերացողուն, լցնել 1 լ ջուր և 15-20 րոպե եռացնել: Թրմել ու սառեցնել: Շաքաթը 2-3 անգամ քսել գլխին: Այն ամրացնում և առողջացնում է մազերը:

✿ Սոխի հյութը քամել, խառնել մածուն, 1 ձվի դեղնուց (կա-

րելի է նաև՝ մեղր, կիտրոնի հյութ), քսել մազարմատներին, գլուխը փաթաթել ու 2 ժամից լվանալ: Կրկնել ամեն անգամ՝ գլուխը լվանալուց առաջ:

✿ Ծաբաթական 1-2 անգամ 2-3 ճ/գ սոխի հյութը քսել մազարմատներին, գլուխը 1-2 ժամով փաթաթել, ապա լվանալ: Նպաստում է մազերի ածին, դադարեցնում մազաթափությունը:

✿ Սոխի հյութին ավելացնել կռատուկ (4:6), 1 բաժին կոնյակ: Խառնուրդը քսել գլխամաշկին, մի քանի ժամից գլուխը լվանալ:

✿ Ընկույզի կեղևն այրել, մոխիր դարձնել, խառնել ծիրապտղի յուղի և գինու հետ, քսել մազարմատներին: Այս միջոցն արագացնում է մազերի ածը և կանխում ճաղատացունը:

✿ Ըստ Ամիրդովլաթի, մոշի ճյուղերի եփուկով գլուխը լվանալը նպաստում է մազերի ածին:

✿ Մայիսյան թարմ եղինջը շատ մանր կտրատել կամ մսաղացով աղալ, լցնել ապակյա տարայի կամ 1 լ-ոց շշի մեջ, ավելացնել սպիրտ (1:1), դնել տաք տեղ, թողնել թրմվի, ապա քամել: Ամեն օր նվազագույնը 1 անգամ քսել գլխի մաշկին:

✿ Խինինի 2 հարի վրայի շերտը մաքրել, փոշի դարձնել, լուծել գոլ ջրի մեջ և գլուխը լվանալուց հետո քսել խոնավ մազարմատներին, գլուխը չցայել: Կրկնել այնքան, քանի դեռ արդյունքի չեք հասել:

✿ Ընկույզի կանաչ տերևն ծեծել, խառնել ժանգի հետ, թողնել 1 շաբաթ և դրանով օծել գլուխը: Ըստ Ամիրդովլաթի, օգնում է ճաղատին, սևացնում է սպիտակ մազը:

✿ Գլուխը լվանալուց հետո գոլ մեղրը մերսելով քսել մազարմատներին, գլուխը փաթաթել ու 40 րոպեից ցայել: Այն կանխում է մազաթափությունը:

✿ 1 թ/գ ծիծեռնախոտը 1 բաժակ եռացրած ջրում թրմել, կես ժամից քամել և քսել մազարմատներին:

✿ 1 թ/գ մեղրին խառնել 1 թ/գ շաղգամի յուղ, 1 թ/գ հեղուկ օճառ, գլուխս սոխի հյութ: Խառնուրդը քսել մազարմատներին, պահել 1,5-2 ժամ ու լվանալ:

✿ Արմավի կորիզն այրել, մոխիրը քսել մազարմատներին:

-43- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

❖ Սխտորի հյութը խառնել խոզի փորի նոր հալած ճարպի հետ, քսել գլխին: 1,5-2 ժամից լվանալ:

❖ 15 գ գայլուկի կոներին ավելացնել 10 գ վաղենակի ծաղիկներ, 20 գ վաղենակի մանրած արմտիք: Խառնուրդից 1 ճ/գ եփել 2-3 բաժակ ջրում, քամել, շաբաթը 2 անգամ քսել գլխին կամ էլ դրանով ցողել մազերը: Բուժման կուրսը 1-2 ամիս է:

❖ Վերցնել հավասար քանակությամբ երիցուկ, եզան լեզու, սուսամբար, եղեսպակ: 1 բաժակ ջրի մեջ լցնել 1 ճ/գ խառնուրդ, 1 ժամից քամել: Աև հացի փափուկ մասը փշրել, խառնել և խյուսը տաք վիճակում քսել մազարմատներին: Գլխաշոր կապել, 2 ժամ թողնել, հետո առանց օճառի գլուխը տաք ջրով լվանալ:

❖ 1 բաժին կռատուկի ցողունի և արմտիքի, 4 բաժին գայլուկի կոների, 1 բաժին ճահճային խնկեղեգի կոճղարմատի խառնուրդից 6 ճ/գ եփել 1 լ ջրում: Շաբաթը երեք անգամ դրանով լվանալ գլուխը:

❖ 1-ական բաժին ուրենու կեղկի, կռատուկի կոճղարմատի և արմտիքի խառնուրդից 4 ճ/գ եփել 1 լ ջրում: Շաբաթը երեք անգամ դրանով լվանալ գլուխը:

❖ Վերցնել 4-ական բաժին վաղենակի ծաղիկներ, կռատուկի ցողուն և արմտիք, 3 բաժին գայլուկի կոներ: Դրանից 55 գ եփել 1 լ ջրում: Շաբաթը 1-2 անգամ եփուկով լվանալ գլուխը:

❖ 8 ճ/գ լորենու ծաղիկները 0,5 լ ջրում 20 րոպե եռացնել և դրանով լվանալ գլուխը: Մազաթափությունը կդադարի:

❖ 50 գ դանձլամերի արմատներին ավելացնել 250 գ ջուր, 250 գ սպիրտ: Խառնուրդը եփել այնքան, մինչև կիսով չափ պակասի: Քամել և ստացված եփուկով 1 ամիս շարունակ շաբաթը երեք անգամ մերսել մազարմատները, իսկ այնուհետև մերսել շաբաթը մեկ անգամ՝ գլուխը լվանալուց առաջ: Օգտակար է մազերի նոսրացման ու ճաղատացման դեպքում:

❖ 50 գ դանձլամերի արմատները 250 գ քացախով եփել, մինչև կիսով չափ պակասի, քամել: 25 գ տուղտի արմատները 150 մլ ջրում թրմել, 1 ժամից քամել: Յեղուկները խառնել, 1 ամիս շարունակ առավոտյան ու երեկոյան քսել գլխամաշկին:

✿ 1 ճ/գ կեչու տերևների վրա լցնել 300 մլ եռացրած ջուր, 2 ժամ թողնել: Մազերը լվանալուց հետո գլխանաշկը շփել այդ ջրով:

✿ 20 գ շաղգամը 1/2 լ ջրով 5 րոպե եփել, սառեցնել, քամել ու քսել գլխի մաշկին, ապա գլուխը սովորական ջրով ցայել: Կիրառել շաբաթը երեք անգամ: Բուժման կուրսը 2 ամիս է:

✿ 2 թ/գ հազորեվարոյի տերևները 300 մլ ջրում 5 րոպե եփել, սառեցնել, քամել: Շաբաթը երկու անգամ քսել գլխի մաշկին: Բուժման կուրսը 2 ամիս է:

✿ Պնդուկի կեղևն այրել, մոխիրը խառնել խոզի ճարպին և քսել մազարմատներին:

✿ Կանաչ սոխի շիլան քսել գլխին, թողնել 2 ժամ, լվանալ:

✿ Սոխը կտրատել, օղիով կամ սպիրոտով թրմել, քսել մազարմատներին: Տաք գլխաշորով փաթաթել: Մազերը լվանալ հաջորդ օրը:

✿ 1 ճ/գ արևքուրիկի վրա լցնել 0,5 լ օղի, 1 շաբաթ թրմել՝ պահելով ամուր փակված շշում: Շաբաթը 1-2 անգամ օղեթուրմը տրորելով քսել գլխին: Անրացնում և առողջացնում է մազերը:

✿ Կուսարմատի թարմ արմատները ճզմել, հյութը քամել ու 1 ամիս անընդմեջ քսել մազարմատներին:

✿ 1 ճ/գ պատատուկի տերևները 10 րոպե եփել 1 լ ջրում: Սառեցնել, քամել և 1 ամիս մազերը թրջել այդ եփուկով:

✿ 1 ճ/գ ալոեի տերևները 10 րոպե եփել 1 բաժակ ջրում, սառելուց հետո քամել: Շաբաթը 2-3 անգամ եփուկը բանբակով քսել գլխին և 1-2 ժամից գլուխը լվանալ:

✿ Ծնալեզվի թարմ արմատները ծեծել, ստացված խյուսը քսել մազարմատներին: Գլուխը փաթաթել մազաղաթե թղթով և սրբիչով: 1 ժամ անց գլուխը ցայել: Այս միջոցը կիրառել 1 ամիս շարունակ: Այն խթանում է մազերի աճը:

✿ 100 գ տրորված ջրկոտեմի տերևներին ավելացնել 100 գ եղինջի տերևներ, 10 գ սազաթաթի տրորված արմատներ, 1/2 լ սպիրտ, 15 օր թրմել՝ օրվա մեջ տարան մի քանի անգամ թափահարելով: Քամել, ամեն անգամ գլուխը լվանալուց հետո քսել մազարմատներին: Այն նպաստում է մազերի աճին:

ԹԵՓ

✿ 10 գ կեչուն ավելացնել 20 գ գերչակի յուղ, 10 գ սպիրտ: Մազերը լվանալուց մի քանի ժամ առաջ այս խառնուրդը քսել գլխի մաշկին: Օգտակար է թեփի, ճարպոտ մաշկի և գլխի քորի դեպքում:

✿ Գինու մեջ դառը նուշ լցնել և դրանով լվանալ գլուխը:

✿ Գլխի ճարպոտ մաշկի և թեփի դեպքում խորհուրդ է տրվում վերցնել 10 բաժին ազարինի սպիրտային թուրմ, 1 բաժին գերչակի յուղ, խառնել ու քսել գլխի մաշկին: Եթե գլխանաշկը չոր է, ապա բաղադրիչները վերցնել հավասար քանակությամբ:

✿ Մազերը լվանալուց 1 ժամ առաջ գլխին քսել շաղգամի կամ էլ արևածաղկի յուղ:

✿ Գլուխը ցայելու համար նախատեսված ջրի մեջ լցնել լորենու թուրմ:

✿ 1-ական բաժին եղինջի տերևների, կռատուկի արնտիքի և ցողունի, գայլուկի կոների, ձիաձետի, դաշտախոտի, հազարթերիկի խառնուրդից 1 ծ/գ 1 բաժակ ջրով եռացնել: Գլխի մաշկը շփել այդ տաք թուրմով:

✿ Վերցնել 3-ական բաժին եղինջի ու տատրակի տերևներ: 6 ծ/գ խառնուրդը եփել 1 լ ջրում: Շաբաթը երեք անգամ գլուխը լվանալ այս եփուկով: Այն արդյունավետ է գլխի քորի և թեփի դեպքում:

✿ 1 ձվի դեղնուցին խառնել 1 ծ/գ գերչակի յուղ, քսել մազարմատներին: Գլուխը սրբիչով փաթաթել և 3 ժամ անց լվանալ չեղոք օճառով: Այն վերացնում է թեփը, չոր ու դյուրաբեկ մազերը դարձնում է առողջ:

✿ Գլխին թիթ հյութ քսել, թողնել 3-8 ժամ: Այն նպաստում է մազերի աճին ու թեփի անհետացմանը:

✿ 1 գլուխս սոխը քերել, լցնել թանգիֆի մեջ, կապել ու դրա-

նով մերսել գլխանաշկը: Մի քանի ժամ անց գլուխը լվանալ: Այս գործողությունը հաճախակի կրկնելուց հետո թեփը կվերանա, մազերը կամրանան, կդառնան փափուկ և առաձգական, միաժամանակ կթարմանա նրանց գույնը:

✿ 1/2 լ 6 %-ոց քացախին ավելացնել 1/2 լ ջուր, եռացնել, ապա լցնել 50 գ կապույտ տերեփուկի ծաղիկներ, 1 ժամ թրմել: 1 ամիս շարունակ այս հեղուկով ցայել մազերը:

✿ Զնջուրի տերևներից ստացված հյութը վերացնում է թեփը, երկարացնում և փափկեցնում է մազերը:

✿ Մանր կտրատած 100 գ եղինջի տերևների վրա լցնել 1/2 լ 6%-ոց քացախ և 1/2 լ ջուր, 30 րոպե եփել: 10 օր շարունակ մազերն առանց օճառի լվանալ քամած եփուկով:

✿ Մանր կտրատած 1 ճ/գ մեղվամուշկի ցողուններն ու ծաղիկները 400 մլ եռացրած ջրում 2 ժամ թրմել: Օգտագործել օրումեք՝ գլուխն առանց օճառի լվանալով: Բուժման կուրսը 1 ամիս է:

✿ Մազարմատներին քել թարմ եղինջի հյութ կամ էլ այն խառնել գլուխը ցայելու ջրին: Այս բուժմահջոցը դադարեցնում է մազաթափությունը և վերացնում թեփը:

✿ Երիժնակի արմատները դասավորել կաթսայի մեջ, լցնել այնքան ջուր, որ հազիվ ծածկի պարունակությունը, դնել ջեռոցը: Եփել այնքան, մինչև արմատները լրիվ փափկեն: Սառեցնել, քամել, եփուկով ամեն օր թրցել մազարմատները: Շուտով թեփը կվերանա, և մազաթափությունը կդադարի:

✿ Մազերը ցայել ձիաձետի եփուկով:

ՈՏՔԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոգմած ոտքերն այսուցվում են, ցավում, փոխավում է մարդու քայլվածքը, իսկ դա շատ է ծերացնում: Եթե չպայքարեք ոտքերի ամենօրյա հոգնածության դեմ, ապա տարիներ անց դրանք կայլանդակվեն: Նախ և առաջ հարկավոր է հարմար կոշիկներ կրել, իսկ երակային հանգույցների ի հայտ գալուն պես պետք է դիմել բժշկի:

Ժողովրդական բժշկությունը խորհուրդ է տալիս՝

✿ Եթե ոտքերը հոգնել են, անհրաժեշտ է դրանք դնել տաք ջրի մեջ և ոտնաթաթերից դեափի վեր մերսել օճառած խոզանակով:

✿ Ոտքերն ամեն օր լվանալ ու մերսել: Շրջանաձև մերսումը հարթեցնում է մաշկը, բարելավում արյան շրջանառությունը:

✿ Ոտնաթաթերի այսուցի և հոգնածության դեաքում ոտքերը դնել տաք ջրի մեջ, որին հարկավոր է ծովի աղ ավելացնել:

✿ Այսուցի դեաքում 1 լ ջրի մեջ լցնել 4 բաժակ կտավատի սերմ, 10-15 րոպե եռացնել: Կաթսան ծածկել, դնել տաք տեղ, թողնել 1 ժամ թրմվի: Կարելի է չքամել: Ավելացնել կիտրոնի կամ որևէ այլ մրգի հյութ: Խնել տաք վիճակում օրը 6-8 անգամ կեսական բաժակ: 2-3 շաբաթից ոտքերի այսուցը կվերանա:

✿ Այսուցի վրա բարակ շերտով մեղր քսել, փաթաթել վիրակապով, այնուհետև՝ պոլիէթիլենով: Երեք օրից լվանալ:

✿ Ոտքերի այսուցի դեաքում հարկավոր է բանբակյա գործվածքից այնպիսի պարկեր կարել, որ հազնելիս հասնեն մինչև ծննները: Դրանք լցնել կեչու տերևաներով ու ոտքերը դնել մեջն այնպես, որ ամեն կողմից պատված լինեն մեկ մատ հաստությամբ տերևաների շերտով: Երբ ոտքերը քրտնեն և 3-4 ժամ անց տերևան-

որ խոնավանան, փոխարինել նորերով: 1-2 անգամ կիրառելուց հետո թույլ այտուցվածությունը կրուժվի, իսկ ուժեղ այտուցվածության ժամանակ գործողությունը կրկնել ևս մի քանի անգամ:

✿ Ամեն առավոտ և երեկո ներբաններին քսել կիտրոնի հյութ, բողնել չորանա: Բուժման կուրսը 2-3 շաբաթ է: Այս բուժմանիջոցը կօգնի ազատվել ոտքերի ջղակծկումներից:

✿ Ջղաձգության դեպքում հարկավոր է սրունքները ներքեց վերև մերսել:

✿ Բանջարեղենի որոշ տեսակներ ունեն հակասնկային ազդեցություն: Անհրաժեշտ է մաշկին (այն վերքեր ու ճաքեր չափելով է ունենա) քսել վարունգի, սև բողկի կամ գլուխ սոխի թարմ հյութ, բողնել ինքն իրեն չորանա:

✿ Սնկային հիվանդությունների ժամանակ խորհուրդ է տրվում խմել թարմ բանջարեղենային հյութեր:

✿ Ոտնաբաթերի սնկային հիվանդության դեպքում ոտքերը լվանալուց հետո մշակել մանգանաթթվային կալիումի լուծույթով, մատների արանքը լավ սրբել ու քսել հակասնկային դեղամիջոց:

✿ Սնկային հիվանդություն ունեցողները պետք է ամեն օր փոխեն գուլպաները՝ դրանց մեջ լցնելով փոշեննան բորաթթու:

✿ 200 գ սոխի կեղևի վրա լցնել 0,5 լ օղի, 10 օր թրմել: Ոտքերը տաք ջրով լվանալ, հետո ստացված թուրմը քսել վնասված մասերին:

Եթե ոտքերը քրտնում են...

Ոտքերը քրտնելը նորմալ ֆիզիոլոգիական երևույթ է, իսկ չափից ավելի քրտնելը՝ հիվանդություն: Հաճախ ինքներս ենք նպաստում դրան՝ հազնելով ուստինե ներբաններով կոշիկներ, չկատարելով ամենօրյա հիգիենիկ լվացումներ, մի քանի օր շարունակ հազնելով միևնույն գուլպան: Եթե ոտքերը չափից ավելի են քրտնում, դա ոչ միայն տիհած երևույթ է, այլև կարող է հանգեցնել բորբքային ու սնկային հիվանդությունների:

-49- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

✿ Ոտքերն ամեն օր լվանալ տաք ջրով և ձեռքի օճառով, այնուհետև դրանք որոշ ժամանակ պահել կաղնու կեղևի, օշինդրի, արոսենու տերևների ու իիպերիկի եփուկի մեջ:

✿ Մանգանի բյուրեղները տաք ջրի մեջ լավ լուծել, ջրով լի տաշտի մեջ լցնել այնքան, որ ջուրը թերևակի վարդագումի, ոտքերը դնել դրա մեջ: Օգտակար է քրտնելու և ոտքերի տհած հոտի դեպքում:

✿ Երեկոյան ոտքերն օճառով լվանալ, որոշ ժամանակ պահել մանգանակալիումով պատրաստված լուծույթի մեջ:

✿ Առավոտյան ոտնաթաթերին քսել ֆորմալինի և շիրի խառնուրդ: 1 թ/գ 40%-ոց ֆորմալինի լուծույթին խառնել 1 թ/գ շիր, կես բաժակ ջուր կամ 50 գ սալիցիլային սպիրտ, 50 գ ջուր: Մաքուր կիսագուլպաների մեջ ցանել փոշենման բորաթթու և հագնել:

✿ Երեկոյան ոտքերը լվանալ ու քսել 5-10 %-ոց ֆորմալինի լուծույթ: Սա խորհուրդ չի տրվում զգայուն մաշկ ունեցողներին, քանի որ ֆորմալինը կարող է բորբոքում առաջացնել:

✿ 300 գ կաղնու կեղևը 2 լ ջրով 30 րոպե եփել, քամել, ավելացնել 2 լ ջուր: Ոտքերը 20-30 րոպե պահել այս եփուկի մեջ: Դարկ է նշել, որ այս լոգանքից հետո մաշկը մգանում է:

✿ 200 գ մանր կտրատած սկումպիայի տերևների վրա լցնել 200 գ եռացրած ջուր, սառեցնել, քամել, ոտքերը 10 րոպե դնել մեջը:

✿ Բորաթթվի բյուրեղները փոշի դարձնել, ամեն առավոտ առատորեն ցանել ոտքերի մատների արանքում: Երեկոյան ոտքերը լվանալ $30-40^{\circ}$ C ջրով: Ուրալում ու Կենտրոնական Ռուսաստանում կիրառվող այս միջոցն օգտակար է ոտքերը քրտնելու և վատ հոտի դեպքում:

✿ Կաղնու կեղևը մանրել, փոշի դարձնել, ամեն օր ցանել գուլպաների մեջ ու հագնել: Կրկնել այնքան, մինչև քրտնարտադրությունը կիսով չափ նվազի: Չի կարելի քրտինքից լիովին ազատվել, որովհետև չափավոր քրտնարտադրությունն անհրաժեշտ

է օրգանիզմին, այլապես բուժվողի մոտ ուժեղ գլխացավեր կառաջանան:

✿ Ամեն օր ոտքերը սառը ջրով լվանալ, շփել կաղնու կեղևի եփուկով: Էմալապատ կաթսայի մեջ լցել 20 գ կաղնու մանրացված կեղև, 1 բաժակ ջուր: Կաթսայի բերանը փակել և մարմանդ կրակով եռացնել: Քամել, ավելացնել այնքան ջուր, որ դառնա 1 բաժակ: Եփուկը քսել ոտքերին, չլվանալ, չսրբել, այլ թողնել, որ իրենք իրենց չորանան:

✿ 1 լ ջրին խառնել 1 ձ/գ չոր սպիրտ, այն լուծել ու դրանով շփել ոտքերը:

✿ Ամեն օր ոտքերը լվանալ սառը ջրով: Եթե չօգնի, գուլպաների մեջ շիրի փոշի լցնել և հազնել: Որոշ ժամանակ անց ոտքերն այլևս չեն քրտնի:

✿ Լոգանքից հետո հարկավոր է ոտքերը չորացնել, վրան տալի ցանել:

✿ Զրտնարտադրության ու տիած հոտի դեպքում գուլպայի մեջ մի պտղունց շաքարավազ ցանել ու հազնել:

Եղունգի ներածի դեպքում խորհուրդ է տրվում՝

✿ Եթե բութ մատի եղունգը ներածում է մսի մեջ և ուժեղ ցավ պատճառում, անհրաժեշտ է ամեն երեկո ցավող մատին կարագ քսել, հազցնել մատնակալ, վրայից՝ կիսագուլպա և ամբողջ գիշեր թողնել: Այս գործողությունը կրկնել 2-3 շաբաթ, ամեն օր: Երբ ցավերը դադարեն, ներածած եղունգի ծայրը բարձրացնել՝ տակը դնելով մի կտոր թանգիֆ: Սա ռուսական հեքինական միջոց է:

✿ Ներածի դեպքում եղունգի կենտրոնում՝ բնիկից մինչև ծայրը, խարտոցով խորը փոսիկ անել: Մի քանի օր անց եղունգն անկյուններից դուրս կգա, և ցավը կանցնի: Այդուհետև եղունգները կտրելիս անկյունները չկտրել:

ԿՈՉՏՈՒԿՆԵՐ



Նեղ կոշիկներ կրելիս հաճախ կոշտուկներ են հայտնվում: Դրանք տգեղ ու ցավոտ գոյացություններ են, որոնք ի հայտ են գալիս մաշկի երկարատև տրորման կամ ոսկորին սեղմելու հետևանքով: Սեղմնան տեղում գրգռման պատճառով սաղմնային շերտից բջիջներ են գոյանում: Ժամանակի ընթացքում եղջերային շերտը հաստանում է, բջիջները խորքում եղջերանում են, առաջացնում ջիղ, որն էլ ցավ է պատճառում՝ ճնշելով նյարդային վերջույթները:

Կոշտուկների դեպքում խորհուրդ է տրվում՝

✿ Մխտորը մանրել, խոզաճարպի հետ տրորել, քսել կոշտուկին: Մի քանի օր կրկնել, մինչև վերանա:

✿ Թեթևակի և մակերեսային կոշտուկների դեպքում ոտքերը 20 րոպե դնել տաք ջրի մեջ, այնուհետև դրանք չեչաքարի օգնությամբ հեռացնել: Ոտքերը չորացնելուց հետո կոշտուկների վրա դնել հատուկ դեղանյութով սպեղանի: Դրա փոխարեն կարելի է քսել նաև կարագ կամ որևէ փափկեցնող քսուք: Գործողությունը կրկնել այնքան ժամանակ, մինչև դրանք ամբողջովին անհետանան:

✿ Քացախի մեջ լցնել սոխի կեղև, թողնել 2 շաբաթ: Քննելուց առաջ կեղևը դնել կոշտուկի վրա, կապել և ողջ գիշեր թողնել: Մի քանի անգամ կրկնելով՝ կոշտուկները կանհետանան: Սա սիրիոյան հեքինական միջոց է:

✿ Խատուտիկի տերևների և արմտիքի հյութը քամել ու ամեն օր քսել կոշտուկներին:

❖ Կոշտուկը տրորել լոլիկի շերտով կամ էլ քսել լոլիկի մածուկ:

❖ Կոշտուկը տրորել խորոված սոխի շերտով կամ էլ՝ կանաչ սոխի տաք խյուսով։ Կոշտուկին հարակից առողջ մաշկին փաթաթան դնել՝ այրվածքներից խուսափելու համար։ Մի քանի ժամից ոտքերը դնել տաք ջրի մեջ, քերել փափկած եղջերաթաղանթը։ Այս գործողությունը կրկնել 2 օրը մեկ, կոշտուկները շուտով կանիետանան։

❖ Ալոեի տերևները լայնությամբ կիսել և քսել կոշտուկներին, վերջիններս կփափկեն։ Քնելուց առաջ ոտքերը դնել տաք ջրի մեջ, ապա սրբիչով լավ չորացնել։

❖ Կոշտուկի վրա կապել կիտրոնի կեղև, որին մի քիչ միջուկ կպած լինի։ 4-5 օրից կոշտուկներն ամբողջովին կանիետանան։

❖ Ցացի միջուկը քացախի մեջ թրծել, քնելուց առաջ դնել կոշտուկի վրա ու կապել։ Այս բուժումն անհրաժեշտ է կրկնել 8-10 օր շարունակ։

❖ 1-2 ճ/զ թարմ կամ 7-10 ճ/զ չորացրած պատատուկը լցնել 0,5 լ ջրի մեջ, 10 րոպե եռացնել։ Քամել, տաք տերևները դնել կոշտուկի վրա։ 20-30 րոպեից տերևները վերցնել, իսկ փափկած մաշկին քսել բուսական յուղ կամ էլ՝ կարագ։

❖ Արմունկների, ծնկների, ձեռքի ափերի կոշտացած մասերը շփել շերտատած գլուխ սոխով, հետո սոխի շերտը սպիտանու (պլաստիր) միջոցով ամրացնել մաշկին։ 20 րոպե անց մաշկը շփել չեչաքարով, լվանալ տաք ջրով, քսել կարագ կամ էլ՝ բուսական յուղ։

❖ Կոշտուկը լվանալ խորոված սոխի եփուկով։

ՏՀԱՃ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ ՖԱՌՆԱՅՈՒՄ



Թունավոր միջատների (մեղու, իշամեղու, շնածանձ, կարիճ, սարդ և այլն) խայթոցի հետևանքները կախված են միջատի տեսակից, ինչպես նաև՝ մարդու օրգանիզմի առանձնահատկություններից: Խայթված տեղում ցավ է առաջանում, լինում է այրոց, այտուց, կարմրություն, տեղային տաքություն: Այդ դեպքում հնարավորինս արագ պետք է ունելիով, սրիչով, դանակի ծայրով կամ որևէ այլ հարմար առարկայով հանել խայթը և խայթած տեղի վրա դնել որևէ սառը բան: Խայթված հատվածին կարելի է դնել ծամած մաղաղանոս, մարդու ականջներում կուտակված նյութը կամ էլ լվանալ տուժածի մեզով: Քիշյալ միջոցները կիրառվում են հատկապես այն դեպքում, եթե օգնության ուրիշ հնարավորություններ չկան (սարում, դաշտում, անտառում):

Օծի կծածի հետևանքները կախված են նրա տեսակից, մեծությունից, գրգռվածությունից, ներարկված թույնի քանակից: Պակաս կարևոր չեն նաև տուժածի տարիքը, քաշը, առողջական վիճակը, ցույց տրվող օգնությունը: Առաջին օգնության ժամանակ ցուցաբերվող սխալ գործողություններն ավելի շատ վնասում են տուժածին, քան` օգնում: Ամենից հաճախ թույլ տրվող սխալներն են կծած վերքի եզրերի խաչաձև կտրվածքը, վերքը լուցկով, կալիումի պերմանգանատով կամ ջրածնի պերօքսիդով այրելը, լարանի՝ ժգուտի կիրառումը, որը մեծացնում է փտախստի կամ ծանր թունավորումների հավանականությունը:

Օծի կծելուց անմիջապես հետո պետք է տուժածին պառկեցնել՝ սահմանափակելով շարժումները: Վերքի եզրերը մատներով զգուշորեն բացել, թույնը բերանով ծծել ու բքել: Այն շարունակել 15 րոպեից ոչ պակաս: Արագ և ակտիվ գործողության շնոր-

հիվ թույնի 20-60 %-ը կիեռացվի: Թույնի տարածումը դանդաղեցնելու նպատակով անհրաժեշտ է վերջույթն անշարժացնել:

Խայթոցների և կծածի դեպքում խորհուրդ է տրվում՝

- ✿ Խնձորի տերևը ծեծել, երեք անգամ դնել օձի կծածի վրա:
- ✿ Օձի կծածի դեպքում բողկի հյութը քամել, գինով խմել:
- ✿ Խմել հում ծվի սպիտակուց, կօգնի օձի կծածին:
- ✿ Եզան լեզուն ծեծել, դնել օձի կծածի վրա:
- ✿ Իժի խայթոցի դեպքում ավելուկի հունդը ջրով խմել:
- ✿ Կարմիր պղպեղի հյութը քսել օձի կծածին: Ցավը և ուռուցքը կանցնեն:
- ✿ Կիտրոնը հիանալի հակաբույն է օձի խայթոցի դեմ:
- ✿ Մատուտակը ծեծել ու դնել օձի կծածի վրա:
- ✿ Պանիրը բունդ քացախով տրորել, քսել օձի կծածին:
- ✿ Օձի կծածի վրա դնել կատվալեզվի տրորած տերևներ:
- ✿ 30 գ ազնվամորու ծաղիկները 1 բաժակ ջրով 20 րոպե եռացնել, օձի կծածի վրա այդ եփուկով թրցող դնել:
- ✿ 2 թ/գ չորացրած եզան լեզվի տերևը 1 բաժակ եռացրած ջրում կես ժամ թրմել, օձի կծածի վրա թրցող դնել:
- ✿ Հնուց ի վեր ազնվամորու ծաղիկների օղեթուրմը համարվում է հակաբույն օձերի ու կարիճների դեմ:
- ✿ Օձի, կատաղած շան կծածի դեպքում քսել սխտորի հյութ:
- ✿ Ընկույզը, մեղրը, սոխը, աղը շաղախել, դնել շան կծածին:
- ✿ Կատաղած շան կծածի վրա դնել թթենու ծեծած տերև:
- ✿ Շան կծածի դեպքում քաղցր նուշը թզով ուտել:
- ✿ Շան կծածի, կարիճի խայթոցի ժամանակ թզենու տերևներից ու պտուղներից արտադրվող սպիտակ հյութը խառնել մեղրին և խմել:
- ✿ Հոնի տերևների թարմ հյութը քամել ու դրանով թրցող դնել: Օգտակար է խայթոցների և կծածի դեպքում:
- ✿ Կծածի ու խայթոցի վրա դնել հոնի ծեծած տերևներ:
- ✿ Չորացրած և փոշի դարձրած կարիճը կարճահարի դեղ է:

-55-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

❖ Ենթերում աճող հազարի հյութն օգտակար է կարիքի խայրոցի դեպքում:

❖ Կարիքի կծածի վրա դնել եռաբաժան կատվալեզվի արմատի շփոթ:

❖ Կարիքի խայրոցի դեպքում կսկիծն արագ կանցնի, եթե բերանն անմիջապես լցնեք աղ և սառը ջուր:

❖ Կարիքի խայրոցի ժամանակ իսկույներ բողկ ուտել:

❖ 2 ճ/գ անանուխի տերևները 30 րոպե թրմել 1 բաժակ եռացրած ջրում ու խայրոցի վրա թրջոց դնել:

❖ Խնձորն օգտակար է կարճահարին, այն մաքրում է մահացու թույները:

❖ Ապակյա տարայի մեջ լցնել պրովանսյան (ձիթապտղի) յուղ, մեջ 3 մորմ գցել: Տարայի բերանը ծածկել, 3 շաբաթ թրմել: Թուրմը կիրառել մորմի խայրոցի դեպքում՝ յուրաքանչյուր ժամը մեկ առատորեն քսելով կծածի վրա: Շուտով կարմրությունը և ուռուցքը կանցնեն:

❖ Միջատների խայրոցի վրա քսել եղերդակի կաթնահյութ:

❖ 1 թ/գ չորացրած եղերդակի ծաղիկները կամ էլ 20 գ մանրացրած չոր արմատը 5 րոպե եփել 1 բաժակ եռացրած ջրում և թրջոց դնել: Օգտակար է միջատների խայրոցի ժամանակ:

❖ Միջատների խայրածի վրա կաթեցնել խատուտիկի կամ կլմուխի բուսահյութ:

❖ Միջատների խայրոցի դեպքում օգտակար են տուղտի, օշինդրի կամ կռատուկի արմատի ջրաթուրմից պատրաստված թրջոցները:

❖ Խնձորը, քամած մածունը մաքրում են թույները:

❖ Սև պղպեղը հակաթույն է:

❖ Կիտրոնի հոտն օգնում է թունավորվածին:

❖ Խորոված սոխը վերացնում է թույների վնասակարությունը:

❖ Դափնու ջրաթուրմը բոլոր թույների հակաթույնն է:

❖ Թունավորվածը մաղարանոս չաետք է ուտի: Այն թույնն անմիջապես հասցնում է սրտին:

❖ Եթե թզի չորի խաշիլ եփեք և ուտեք, ոչ մի թույն ձեր օրգանիզմի վրա չի ներգործի:

ԼՈՒՄՆՈՏՈՒԹՅՈՒՆ

Լուսնոտությունն (քնաշրջություն) այնպիսի հիվանդագին վիճակ է, որի ժամանակ մարդը քնի մեջ տարատեսակ անգիտակցական գործողություններ է կատարում (քայլում է, սողում և այլն):

Կես դար առաջ Ռուսաստանում բնակվող ականավոր պրոֆեսորներից մեկն իր կյանքը նվիրում է լուսնոտության ուսումնասիրությանը՝ այդ հիվանդության բուժման ասպարեզում անառարկելի հեղինակություն համարվելով։ Նրա մոտ հիվանդներ էին գալիս նույնիսկ տասնյակ հազարվելով։ Նրա մոտ հիվանդներ էին գտնվող բնակավայրերից։ Պրոֆեսորը խորհուրդ էր տալիս հիվանդությունը կանխել ամենասկզբից և սովորաբար առաջարկում էր լուսնոտի մահճակալի մոտ փոել լավ թրջած գորգ։ Լուսնոտը, տրորելով այն, զգում էր ջուրը, անմիջապես արթնանում էր, նորից պառկում մահճակալին ու քնում։

Եթե մարդը վաղուց ունի այդ հիվանդությունը, ապա թաց գորգն արդեն բավական չէ, թեպետ այն միշտ էլ պետք է փուված լինի մահճակալի մոտ։ Խորացած հիվանդության ռեպրում արոֆեսորը կարգադրում էր քնել փակ պատուհաններով սենյակում, որի մուտքի մոտ՝ ներսից ու դրսից, ոչ հաստ շերտով ջուր է լցված։ Զուրու պիտի ծածկված լինի որևէ սև ծածկոցով, գերադասելի է՝ սև չքով, բայց այնպես, որ այն չքսվի ջրի մակերևույթին։ Լուսնոտը, ոտքը դնելով կտորի վրա, իսկույններ զգում է ջուրը և արթնանում։

Դին հայկական բժշկարամներում նշված է լուսնոտության բուժման մեկ այլ միջոց։ Դարձակվոր է լոշտակի (մանրագոր)՝ դեռևս չբացված ծաղիկը փաթաթել քարանե լաթով ու յորնագույն աբրեշումով (մետաքս) կամ դերձանով, կապել լուսնոտ երեխայի պարանոցին։ Ինչքան երկար ժամանակ մնա կապված, այնքան ավելի լավ։

ՃԻՇՈՒՆԵՐ

✿ Մեղրն ընկույզով շաղախել և ուտել: Փորից դուրս է հանում տափակ ու երկար ճիճուները:

✿ Ընկուգենու կեղևը որոշ ժամանակ պահել գինու մեջ ու խմել: Այն ոչնչացնում է ճիճուները:

✿ Դեղձենու տերևը ծեծել, ջուրը խմել: Յեռացնում է կլոր ու տափակ ճիճուները:

✿ 5 գ նորան կեղևին ավելացնել 100 մլ եռացրած ջուր, թողնել 30 րոպե: Խմել օրվա ընթացքում 3-4 անգամից: Օրգանիզմից հանում է ժապավենածև որդերը:

✿ Նորան արմատի կեղևից եփուկ պատրաստել և խմել: Սա ճիճվասպան միջոց է:

✿ Տանձի կորիզները լավ ծամել ու կուլ տալ:

✿ Բոլոր տեսակի ճիճուները կվերանան, եթե բերանում երկար ժամանակ նուշ պահեք:

✿ Օրվա ընթացքում մեզը հավաքել, տաքացնել և դրանով հոգմա անել:

✿ Դանդուռի հյութն օրգանիզմից դուրս է հանում տափակ ճիճուները:

✿ Եթե հում այսուրը երկար ժամանակ ծամեք, օրգանիզմը կմաքրվի ճիճուներից:

✿ Զմերուկի և կաղամբի սերմերն ունեն հակածիճվային հատկություն:

✿ Սոխի վրա գինի լցնել, որոշ ժամանակ թողնել ու խմել: Ոչնչացնում է հետանցքային ճիճուները:

✿ Սխտորը հանում է մեծ ու մանր ճիճուները:

✿ Եթե օրական ընդունեք 2 ճ/գ գազարի հյութ և սերմ, ճիճուներն օրգանիզմից դուրս կգան:

- ❖ Դարչինը, սև հաղարջն ունեն ճիճվասպան հատկություն:
- ❖ Սև պղպեղը հեռացնում է տափակ ճիճուները:
- ❖ Մաղաղանոսն սպանում է մեծ ու փոքր ճիճուներին:
- ❖ Ամեն առավոտ անոթի վիճակում խմել 1 գ/գ քնջութի յուղ:
- ❖ Մկան ականջը՝ անմոռուկը, ջրով եփել և խմել: Այն փորից դուրս է հանում մեծ ու փոքր ճիճուները:
- ❖ Դդումի չոր սերմերը կեղկից զատել, մանրել կամ աղալ, մի քիչ ջուր ավելացնել և խմել: Մեծահասակների չափաբաժինը 60-80 գ է, երեխաներինը՝ 30-40 գ: 2 ժամից լուծողական ընդունել:
- ❖ 1 լ օղու կամ սպիրտի մեջ լցնել 150 գ մանր կտրատած սխտոր, պահել մութ տեղում, 2 շաբաթից քամել: Գոլ ջրին խառնել 3 թ/գ սխտորի օղեթուրմ ու դրանով հոգնա անել:
- ❖ Խակ ընկույզի կեղկից եփուկ պատրաստել և խմել:
- ❖ Սխտորը լցնել եռացրած կաթի մեջ ու խմել: 2 ժամ անց լուծողական ընդունել: Ըստ ռուս հեքիմների, վերացնում է բոլոր տեսակի ճիճուները:
- ❖ Կեչու բողբոջների թուրմը կամ եփուկը, ինչպես նաև տերևների եփուկը ճիճվաթափ միջոցներ են:
- ❖ 70° թմբության 1 լ սպիրտի մեջ լցնել 30 գ կեչու բողբոջներ: Օգտագործել օրը երեք անգամ՝ 1 ծ/գ ջրին խառնելով 15-20 կաթիլ: Վերացնում է փոքր, կլոր ճիճուները:
- ❖ Դանձլամերն օրգանիզմից դուրս է մղում ճիճուները:
- ❖ Կիտրոնը դուրս է հանում մեծ ու փոքր ճիճուները:



Օ ԳՏԱԿԱՐ Է ԻՍԱՆՆԼ



⦿ Թթու բալը բարերար ազդեցություն է ունենում նյարդային համակարգի վրա: Այն օգտակար է հոգեկան հիվանդությունների դեպքում:

⦿ Խաշը հանգստացնում է նյարդային համակարգը:

⦿ Հարիսան հանգստացնում է նյարդային համակարգը, բուժում է նյարդային մի շարք հիվանդություններ:

⦿ Ծիրանն անրացնում է նյարդային համակարգը:

⦿ Ղնակն ամրացնում է նյարդային համակարգը:

⦿ Թթու խնձորը նպաստում է նյարդային համակարգի լարվածության բուլացմանը:

⦿ Հունական ընկույզի յուղն անփոխարինելի միջոց է բուլոր նյարդային հիվանդությունների դեպքում:

⦿ Ուղեղ ուտելը բուլացնում է բարձրագույն նյարդային համակարգի լարվածությունը:

⦿ Նյարդային հիվանդությունների ժամանակ օգտակար է նռան գինին:

⦿ Ղանձլամերը հանգստացնում է նյարդային համակարգը:

⦿ 1 բաժակ ջրի մեջ լցնել 0,5 բաժակ թրաշուշանի և 2 ճ/գ սպիտակ մանուշակի թերթիկներ: 7-8 օր պահել մութ տեղում, ապա ավելացնել 1 թ/գ կերակրի սողա: Խմել օրը երեք անգամ 1 ճ/գ՝ ուտելուց առաջ: Բուժում է նյարդերը:

⦿ Նյարդերի բուժման համար շատ օգտակար է բուսախոտերից պատրաստված թեյը: 20 գ դաղձի տերևները, 25 գ կատվախոտի արմատները, 50-ական գ սուսամբարի ցողունը, իշառվույսի ցողունը և ալիճնուու ծաղիկներն իրար խառնել, այնուհետև այդ խառնուրդից 2 ճ/գ վերցնել, լցնել 0,5 լ եռացրած ջուր, սառեցնել ու քամել: Խմել օրը երեք անգամ 1-ական գավաք՝ ուտելուց առաջ:

ՔՐՈՆԽԻԱԼ ԱՍԹՄԱ

Բրոնխիալ ասթման իճֆեկցիոն ալերգիկ հիվանդություն է, որն առաջանում է բրոնխների մկանների սպազմի հետևանքով: Այն խրոնիկական հիվանդություն է, ընթանում է սրացումներով: Օրգանիզմի սառեցումը, սնունդը, հոգեկան լարվածությունը, դեղերը կարող են ասթմայի սրացման պատճառ հանդիսանալ:

Հիվանդության զարգացման հիմքում ընկած է ալերգիան, մեծ դեր ունեն նաև կենտրոնական նյարդային համակարգը և վարակը:

Հիվանդության ախտանիշներն են՝

Նոպայաձև հազը, շնչահեղձությունը, հիվանդը գունատվում է, վերին և ստորին վերջույթները կապտում են, մաշկը պատվում է սառը քրտինքով: Նոպան հիմնականում սկսվում է գիշերը: Այդ ժամանակ հիվանդը նստում է՝ շնչառությունը հեշտացնելու համար:

Բրոնխիալ ասթմայով հիվանդ մարդու սենյակում օդը միշտ պետք է մաքուր լինի, այնտեղ ծխել չի կարելի, իսկ եթե ծխել եք և հնարավոր չեք սենյակն օդափոխել, ապա հիվանդի մոտ հարկավոր է դնել անուշադրի սպիրոտով լի սրվակ:

Բրոնխիալ ասթմայի բուժման համար խորհուրդ է տրվում՝

✿ Խսմել այժի կաթ, հավի արգանակ:

✿ Զնջութն աղով բովել, ուտել: Դրանից հետո հնարավորինս քիչ ջուր խմել:

-61- ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

❖ 100 գ դափնետերնին ավելացնել 50 գ բուսական յուղ, 8-10 օր թողնել և ասթմայի ժամանակ քսել կրծքավանդակին:

❖ Հանկարծակի նոպայի ժամանակ պետք է կուլ տալ սառուցի կտորներ, հոտ քաշել անուշաղի սպիրտից, սրունքներին դնել մանամեխի սպեղանի, մարմինը խոզանակով մերսել:

❖ Օգտակար է սև ծիրապողի ձեթ ծխեցնելը:

❖ 100 գ ծլեցրած ցորենն աղալ, ըստ ցանկության խառնել մեղր, բուսական յուղ և ուտել:

❖ Ասթմայով իիվանդներին խորհուրդ է տրվում փուչիկ փչել:

❖ 1 կգ աղը լցնել տոպրակի մեջ, կապել, դնել թոքերի վրա: Քնել տոպրակով:

❖ 1 բաժակ ջրի մեջ լցնել 1/2 բաժակ մայիսյան կռատուկ, 0,5 բաժակ կաղամախու տերևներ, 1 թ/գ բրգածն սոճու թարմ ասեղիկներ, 1/2 թ/գ կերակրի սողա: Մութ տեղում 5-6 օր թրմել: Խմել շաբաթը 1 անգամ 1-ական ճ/գ՝ առավոտյան ու երեկոյան՝ քնելուց առաջ:

❖ Կրծքավանդակին սպեղանիով (պլաստիր) ամրացնել 4-5 պղնձադրամ, 4 օր պահել:

❖ Ասթմայի դեպքում խմել շաղգամի հյութ:

❖ 2 լ ջրում եփել 200 գ կովի կամ հորթի թոք, աղ ավելացնել, կտրատել 2 գազար, նեխուրի ցողուններ, 2 պճեղ սխտոր, սոխ: 1 օրից ուտել այս ապուրը:

❖ 1-ական ճ/գ ծորորի և սուլտի մանրացված արմատների վրա լցնել 1 բաժակ եռացրած ջուր, բերանը փակ վիճակում 15 րոպե տաքացնել ջրային գոլորշու վրա: 45 րոպե սառեցնել, այնուհետև քամել: Ստացված 200 մլ եփուկը խմել օրը երեք անգամ 1/3 բաժակ:

ԻՆՔՆԱՄԵՐՍՈՒՄ

- ❖ Ինունիտետը կմեծանա, եթե ամեն օր մերսեք ականջները:
- ❖ Բարձր ճնշման դեպքում սեղմել միջնամատերի ծայրերը:
- ❖ Ախտրժակը կփակվի, եթե մերսեք ականջի՝ դեմքին մոտ գտնվող եռանկյունաձև կրծիկը:
- ❖ Մի քանի րոպե մերսելով ականջները՝ կմեծացնեք ձեր էներգիան, կավելացնեք աչքերի փայլը:
- ❖ Ուսերի՝ շրջանաձև շարժումներով մերսումը հանում է լարվածությունը:
- ❖ Եթե անսպասելի ուժեղ ցավի ժամանակ մի քանի անգամ մերսեք վերին շրթունքի կենտրոնական մասը, ցավը կմեղմանա:
- ❖ Հուզմունքի դեպքում նստեք, փակեք աչքերը և 10 վայրկյանից ոչ պակաս մերսեք հոնքերի կենտրոնը:
- ❖ Մի՛ ծովլացեք, ամեն երեկո մերսեք ոտնաթաթերը: Ոտնատակի, ոտնաթաթերի՝ շրջանաձև շարժումներով մերսումը վերացնում է հոգնածությունը, կարգավորում արյան շրջանառությունը:
- ❖ Եթե մերսեք պարանոցի մկանները, վախն ու անհանգստությունը կանցնեն:
- ❖ Սիրտն առողջ կլինի, եթե ցուցանատը դնեք միջնամատի վրա և 2-3 րոպե սեղմեք կրծքավանդակի միջնամասը:
- ❖ Շրջանաձև շարժումներով կրծքավանդակի մերսումն օգտակար է վախի և նկրոզների դեպքում:
- ❖ Եթե խախտված է մարսողությունը, մերսեք որովայնը:
- ❖ Քրարմատը շրջանաձև շարժումներով մերսելով՝ կազատվեք գլխացավից, հարբուխից, աչքերի հոգնածությունից:
- ❖ Փոխադրամիջոցներից առաջացած հոգնածության, սրտխառնոցի դեպքում անհրաժեշտ է երկու մատով սեղմել գագարը և ժամացույցի սլաքի ուղղությամբ կատարել շրջանաձև շարժումները:
- ❖ Արևահյուսակի մերսումը լավ է ազդում մարսողության վրա:

ԽՆՁՈՐԻ ԲՈՒԺԻՉ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Խնձորն ամենահայտնի և սիրված պտուղներից է: Իր գեղեցկության ու համի շնորհիվ այն թագավորների թագի և զավազանի զարդն է եղել: Խնձոր է անվանվել նաև սրբազան խաչից ներքև դրված գունդը: Պարունակում է կալիում, կալցիում, երկաթ, մագնիսիում, ֆոսֆոր, ցինկ և մի շարք վիտամիններ: Գոյություն ունեն խնձորի թագնազան տեսակներ:

Յայ մեծ բժշկապետ Ամիրդովլար Անասիացին գրում է, որ լավագույնը քաղցր ու անուշահոտ խնձորն է: Դիմ բժշկարաններում նշված է, որ զուսապ բնավորության տեր մարդկանց շատ օգտակար է քաղցր խնձորը, իսկ եռանդունների համար՝ թթվաշը: Վերջինս բուլացնում է նյարդային համակարգը:

Յամեղ միրգ լինելուց զատ, այն օժտված է նաև մի շարք բուժիչ հատկություններով: Քաղցր ու բուրավետ խնձորը հոտոտելիս ուժեղանում է ուղեղի աշխատանքը, իսկ խակ կամ քաղած վիճակում հասունացած պտուղներն այնքան էլ առողջարար չեն: Խնձորի՝ չափից ավելի օգտագործման դեպքում կարող է առաջանալ թոքախտ. այն արտադրում է զագեր, որոնք լցվելով անոթները՝ թռքախտի պատճառ են դառնում:

Այս միրգն օգտակար է սակավարյունության (անեմիա), գլխացավի, դեղնաախտի, փրկածության, դիգենտերիայի և աղիքային այլ հիվանդությունների ժամանակ:

Եթե խնձորը եփեն, ծեծեն ու դնեն աչքերին, ցավը կանցնի, տեսողությունը կուժեղանա: Իսկ կատարակտը կանխելու համար հարկավոր է խնձորի գլխիկը կտրել, փոսիկ անել, մեջը լցնել 1 թ/գ մեղր և 1 օր թողնել: Ստացված հեղուկն առավոտյան և

Երեկոյան 2-ական կաթիլ կաթեցնել աչքերի մեջ: Լուծույթը սառնարանում կարելի է պահել 5-6 օր: Փորկապության դեպքում խորհուրդ է տրվում ուտել փոթոք (փխրուն) խնձոր, իսկ լուծի և ործկալու ժամանակ խմել նրա հյութը՝ խառնած թթու նռան գինու հետ: Այն ուժեղացնում է ստամոքսը:

Խնձորն առողջարար է նաև սրտի համար. զորացնում է այն և մարդուն ուրախություն պարզեցնում: Բուրավետ պտղի բույրը բարերար ազդեցություն է ունենում սրտի վրա:

Խնձորը դադարեցնում է փսխումը, օրգանիզմը մաքրում է ամեն տեսակ թույներից: Այն մահացու դեղերի ու գազանհարի թշնամին է, սակայն չի կարելի ուտել խակ վիճակում, քանի որ դրանից ջերմ է առաջանում: Օրգանիզմի վրա լավ ազդեցություն է ունենում խնձորային նոնոդիետան: 7-14 օր հարկավոր է օրական ուտել 400-500 գ խնձոր:

Գորտնուկների առկայության դեպքում պետք է խնձորը կոճի թելով կիսել, երկու կեսերն էլ քսել գորտնուկին, այնուհետև կեսերը միացնել, նույն թելով կապել ու հողում հորել: Երբ այն նեխի, գորտնուկը կվերանա:

Օգտակար է նաև նրա կորիզը: Յոդի պակասի դեպքում անհրաժեշտ է ամեն օր ծամել և կուլ տալ 8 հատիկ կորիզ: Վերջինս պարունակում է օրգանիզմին անհրաժեշտ յոդի օրվա չափաբաժնը:

Եթե ատամները լվանալու հնարավորություն չկա, ապա քննւուց առաջ խնձոր կերեք:

Խնձորը երկար ժամանակ պահելու համար հատ-հատ քաշեք, փոքր գարու հարդի վրա՝ զով տեղում: Կարելի է նաև վերցնել ընկուզենու կամ կվենու թեփ, լցնել չձյութված կարասի մեջ, պտուղը թաղել այնտեղ: Երկար ժամանակ այն կմնա թարմ ու անվնաս, եթե կարասի բերանն այնպես փակեք, որ օդ չթափանցի:

